

2(360)

31.01.2014

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն և գիտաբար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՒ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶԻՆՎՈՐԻ ԳԻՏԱԿԵՏԻՑ

Աղբյուրների զինուժի կողմից սահմանային միջադեպեր հրահրելը կարծես թե սովորական երևույթ է դարձել, հատկապես, ակնկալվող որևէ քաղաքական իրադարձության նախօրեին կամ էլ հիշարժան տարեթվի կապակցությամբ: Հունվարի լույս 20-ի գիշերը դարաբաղա-աղբյուրների հակամարտ գործերի շփման գծի հյուսիսարևելյան (Ջրաբեր) և հարավարևելյան (Կորգան) ուղղություններում աղբյուրների ծեռնարկած հերթական դիվերսիան, ըստ էության, հունվարյան «սև օրերի» տարելիցի հետ էր կապված: Թե ինչ կապ ունեն արցախցիները 1990թ. հունվարի 20-ին Քաբվում տեղի ունեցած իրադարձությունների հետ, դժվար է ասել: Ավելին, քանակորտ տարի առաջ այդ օրերին Աղբյուրների հետ ինքնաբերական ծեռնարկած հերթական դիվերսիան ինչպես ևս չէր հարկավորվում: Փոխանակ փորձեն «մաքրել» իրենց ազգի ճակատին մնացած խարանը, հարևան երկրում անուժ են հակառակը՝ հերոսացնում են այդ նախնիների կազմակերպիչներին:

Ամեն տարի հունվարին սկսում է արթնանալ ազգերի վայրի բնագործ, և արյան ծարավ զազանը կրկին նետվում է կարծեցյալ գոհի վրա: Արցախյան պատերազմը, սակայն, համոզողուն ցույց է տվել, որ հայը ոչ թե պոտենցիալ գոհ է, այլ հաղթող ու արժանապատիվ ազգ, որին անհնար է ծնկի բերել: Ազգերների ծեռնարկած հերթական դիվերսիայի տապալունը, որի արդյունքում գոհվել է առնվազն երկու և վիրավորվել 6 աղբյուրների զինվորական, ևս մեկ անգամ վկայում է հայ զինվորի անսասանելիության մասին: Ինչը հոգով դիմագրավել էր երեսուցի հոգանող դիվերսանտական խմբին՝ իսկական ռազմական սխրանք է: Պետք է նկատի առնել, որ հայ դիրքապահները ընդամենը 18-20 տարեկան տղաներ էին, որոնք չունեին դիվերսիոն խմբի հատուկ պատրաստվածությունը: Այս փաստը նույնպես վկայում է, որ սին են աղբյուրների կազմակերպչական «հզորության» մասին ազգերական քարոզչամեթոդային ծամարտակոչությունները: Իսկ հայ զինվորը, անկախ նրանից՝ հատուկ պատրաստություն է անցել դրա համար նախատեսված մասնագիտացված հաստատություններում, թե ոչ, միշտ պատրաստ է և ունակ է իր հողը պաշտպանելու:


Ցավոք, դիվերսանտների հետ անհավասար մարտում գոհվեց կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը, որի աշխրջության շնորհիվ մեր մարտիկները կարողացան արագորեն կազմակերպել պաշտպանությունը: Նա իրեն դրսևորեց իսկական հերոսի պես՝ չերկնջելով թշնամու առաջ, քաջ գիտակցելով, որ հայրենիքի սահմանը սկսվում է հենց իր դիտակետից, ու չպիտի թույլ տալ, որ ոսոխը ոտք դնի այնտեղ: Սահմանը հսկող ամեն մի զինվորի համար հայրենասիրությունը սուրբ երգում է, որի բառերը գրվել են Արցախյան գոյամարտում: Ամբողջությամբ սերտել դրանք՝ նշանակում է բացահայտել սխրանք գործելու գաղտնիքը: Հայկական զինուժում ծառայող ամեն մի հայրորդի լավ գիտե այդ գաղտնիքը և միշտ պատրաստ է սխրանքի՝ ընդհուպ իր կյանքի գնով: Արմեն Հովհաննիսյանի անձնական օրինակը ասվածի վառ վկայությունն է:

ԼՂՀ նախագահի հրամանագրով կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: Խիզախ հայրորդու դին հողին է հանձնվել զինվորական պատիվներով, իսկ քաղաքացիական հասարակությունը հիշատակի մոմավառություն է կատարել ՀՀ և ԼՂՀ տարբեր քաղաքներում: Եվս մի պայծառ անուն գրվեց մեր հուշերի թանկ մատյանում, արիության դրսևորման մի նոր դրվագ ավելացավ Հերոսամարտի պատմության մեջ...

Վիրավոր գազանը միշտ կատաղած է լինում, բայց որպեսզի նա լրջորեն վտանգավոր չդառնա, պետք է գազանից ուժեղ լինել: Իսկ մենք, ի դեմս ԼՂՀ պաշտպանության բանակի, անհրաժեշտ այդ ուժը մշտապես ունենք և օրեցօր ավելի ենք հզորանում: Դրանում ոչ ոք չի կասկածում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՐԴՇ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ



Հունվարի 27-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի խորհրդի նիստը, որին հրավիրված էին համալսարանի գիտական խորհրդի անդամները, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողության ակտիվը: Այն վարում էր ԱրԴՇ խորհրդի նախագահ, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը:

Նիստի աշխատանքներին ներկա էին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, Անվտանգության խորհրդի քարտուղար Մարտ Մուսայելյանը, կրթության և գիտության նախարար Ալավա Ասրյանը:

Ներկաները նախ լսեցին Արցախի մայր բուհի ղեկավար Մանուշ Մինասյանի հաշվետվությունը 2012-2013 ուսումնական տարում իրականացված աշխատանքների մասին: ԱրԴՇ 2013 ֆինանսական տարվա գործունեության և 2014-ի եկամուտների ու ծախսերի մասնաշարժի նախագծի մասին զեկուցումով հանդես եկավ գլխավոր հաշվապահ Գոհար Սարգսյանը:

Կատարված աշխատանքներին գնահատական տվեցին ելույթ ունեցողները: Ծավալվեց ակտիվ քննարկում:

Խորհրդի նիստի աշխատանքներն ամփոփող ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը:

2

ՈՐԱԿՅԱԼ ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՒ ՆԱԵՎ ԲՈՒՀԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԸ

Արցախի պետական համալսարանի խորհրդի նիստում ելույթ է ունեցել ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ալավա Ասրյանը: ԼՂՀ ԿԳ նախարարը նախ ԳԶԵԳ, որ համալսարանում տարեցտարի նկատելի են դրական տեղաշարժերը: Թե՛ իրականացվող բարեփոխումները և թե՛ զարգացման խնդիրները մշտապես գտնվել են գերատեսչության ուշադրության կենտրոնում: Ըստ նախարարի՝ հաջողություններ կան, և դրանք բոլորին են: Ու գերատեսչության կանգ առնել խնդիրների վրա: Նա անդրադարձավ նախ դպրոց-բուհ-դպրոց շղթային, որի առնչությամբ հաճախ փոխադարձ մեղադրանքներ են հնչում: Այդ կապը պետք է շատ ճկուն գործի, քանզի համալսարանը դպրոցից է ստանում հումքը, որի հետ, որպես ուսանող, աշխատում են դասախոսները, այնուհետև որպես մասնագետ՝ նրանց ուղարկում դպրոց կամ տնտեսության այլ ճյուղեր: Նախարարի դիտարկմամբ՝ փորձը ցույց է տվել, որ միասնական քննությունների արդյունքում ավելի կայուն գիտելիքներով կոնսոլիդացնում է ընդունվում բուհ, ինչը հույս է ներշնչում, որ առաջիկա տարիներին որակական առումով կունենան ավելի լավ մասնագետներ:

Ս. Ասրյանն ասաց, որ վերլուծելով դպրոցում տիրող վիճակը՝ եկել են այն համոզման, որ լուրջ խնդիր ունեն վավագույն ուսուցչական կազմի համալրման առումով: Տեսչական և ԳԹԿ-ի կողմից անցկացվող ընթացիկ ստուգումներն այն եզրահանգման են բերել, որ դպրոցները, հատկապես բնագիտական մասնագիտությունների գծով, որակյալ մասնագետների խիստ կարիք ունեն: «Այսօրվա մեր դպրոցում աշխատող մասնագետը լիարժեքորեն չի բավարարում ներկայացվող պահանջները»,- ասաց ԿԳ նախարարը: Ամձամբ իր՝ որպես մաթեմատիկայի մասնագետի կատարած դասախոսումները տխուր իրողություն են բացահայտել. որ ավագ դպրոցների ուսուցիչներից ոմանք ու նաև մյուս դպրոցներում ուսուցիչը խորությամբ չի տիրապետում

առարկային: «Եթե ուսուցիչն ինքը չի տիրապետում իր առարկային, նրանից լավ արդյունք սպասել չի կարելի»,- հայտարարեց նա: Իսկ որակյալ մասնագետներ պատրաստում է համալսարանը: Նախարարը նաև մի ցավալի փաստ նշեց. զգալիորեն նվազել է բնագիտական առարկաների գծով դիմորդների թիվը: Այս մտահոգությունը կբարձրագույն իշխանությունների առաջ: Ի դեպ, այս տարվա բուհի ընդունելության մասնագիտությունների ցանկում նոր մոտեցում է ցուցաբերվել ազդարարին որոշ մասնագիտությունների գծով՝ ամօձար համակարգ ընդունել մեկ միասնական քննությանը: Իսկ վճարովի համակարգ՝ առանց միասնական քննությունների: Նման վերապահում արվել է նաև մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա մասնագիտությունների գծով:

Նախարարը դասախոսների առաջ խնդիր դրեց այդ ուսանողների հետ աշխատել հատուկ մոտեցումով, որպեսզի նրանք ստանան կայուն գիտելիքներ:

Ս. Ասրյանը նկատեց, որ այս առումով բուհն էլ գերծ չէ թերություններից և խնդիրներ ունի: «Եթե այսօր ամբողջ հայտարարում ենք որակյալ ուսուցչական կազմի անհրաժեշտության մասին, նույնը կարող ենք ասել նաև համալսարանի վերաբերյալ: Ոչ բոլոր ամբիոններում են իրենց գործի ընդհանրած, առարկային խորությամբ տիրապետող մասնագետներ աշխատում»,- ասաց նախարարը: Գերատեսչության ղեկավարն այստեղ ուսումնական պլանների վերանայման խնդիր է տեսնում և առաջարկեց հիմք ընդունել ՀՀ մանկավարժական համալսարանների ուսումնական պլանները՝ ավելի խորությամբ ուսումնասիրել այն առարկաները, որոնք անհրաժեշտ են դպրոցին:

ԿԳ նախարարն իր նկատառումներն է հայտնել նաև ուսման վարձավճարի գործող գեղջերի առնչությամբ: Նա բուհի ղեկավարությանն առաջարկեց ըստ սոցիալական խմբերի կատարել վերլուծություն, ինչի արդյունքում

հնարավոր է ընդլայնել կարիքավոր ուսանողների ցանկը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարն արտահայտվեց հաշվետու ժողովում հնչած մեկ այլ հարցի՝ ԱրԴՇ միջազգային ճանաչման մասին: Նախարարության կողմից անցյալ տարի ուսումնասիրություններ են կատարվել բուհերի լիցենզավորման դասախոսների չունեն պատասխանության ուղղությամբ: Եվ եկել են այն եզրակացության, որ Արցախի մայր բուհն էլ լիցենզավորման պայմանները չի բավարարում լիարժեքորեն՝ դասախոսական կազմին ներկայացվող պահանջների առումով, գիտական կոչումներ և աստիճաններ ունենալու տեսակետից: Որոշ ամբիոններ բավարար քանակով համապատասխան դասախոսներ չունեն՝ ասելով, որ այս ուղղությամբ համալսարանը աշխատանքներ պետք է ծավալի: Արցախի պետական համալսարանն ունի ասպիրանտուրա. ամեն տարի ՀՀ բուհերում կրթված ասպիրանտական 5 անվճար տեղ է հատկացվում համալրել: Օտար լեզվի քննության չափանիշները խստացվել են, ինչի պատճառով մեր շրջանավարտները չեն կարողանում հանձնել ծրագիրը: Անցյալ տարի ՀՀ բուհերի ասպիրանտուրա է ընդունվել 3 հոգի: Գոնե նրանք եթե կարողանան գիտական թեզ պաշտպանել և համալրել ԱրԴՇ ամբիոնները, էլի առաջընթաց է:

Նախարարը տեղեկացրեց, որ ՀՀ-ում կրթական հաստատությունների վարկանիշավորման գործընթաց է գնում: ՀՀ ԿԳ նախարարի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Արցախի բուհերը ևս ներառել դրանում: Մեր բուհերը պետք է ծանոթանան չափանիշներին, և այդ ուղղությամբ տարվի համապատասխան աշխատանք, որպեսզի ընդհանուր ցանկում զբաղեցնեն արժանավոր տեղ:

Սեփ. լրատվություն

ՀԱՅՐԵՆՅԱՑ ԴԱՇՏՊԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ ՍԻՐՈՂ ԱՄԵՆ ՀԱՅ ՄԱՐԴ

Չգիտեմ՝ ով ինչպես, բայց ես այն կարծիքին եմ, որ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի տարեմուտի ուղերձում («Մեր ամբողջում՝ մեր օրենքներով...») բարձրացված հարցերը, խնդիրները խորհելու, մտորելու տեղիք են տալիս ոչ միայն բարձրաստիճան զինվորականին, այլև մշակույթի ոլորտի աշխատողին, հողը մշակողին, ուսուցիչին, պատշարին, բոլորին: Ուղերձում արժարժվում են շատ մտքեր ու գաղափարներ, որոնցից, սակայն, առավել մեծ

նշանակությամբ առանձնանում է մեկը. «Հայրենիքի պաշտպան են ոչ միայն զինվորն ու սպան, այլև աշակերտն ու ուսուցիչը, բանվորն ու հողագործը, շինարարն ու դաշնակահարը... Հայրենի հողը սիրող ամեն մի ՀԱՅ ՄԱՐԴ, ամեն մի քաղաքացի»:

Նախարարի այս տողերը մեզ շատ բան են հուշում: Իրոք, բանակը մեր տունն է, մեր ամրոցը, որտեղ բոլորը պետք է ապրեն այդ ամրոցի համար՝ ընդհանուր, բոլորի համար միևնույն օրենքներով: Սակայն մեր բերդ-

անրոցն, ինչպես շեշտված է ուղերձում, ի գորտն չէ միայնակ դիմադրվել արտաքին մարտահրավերներին: Պաշտպանության գերատեսչության ղեկավարը հատուկ ընդգծում է, որ հայրենիքի պաշտպանը միայնակ լինել չի կարող:

- Սիս այս դեպքում է հարկավոր,- ասում է նա,- տուն-դպրոց-բանակ-բուհ-հասարակություն համագործակցության ամուր բռնկումը, որի շնորհիվ, համոզված եմ, կարող ենք հասնել ոչ միայն մեր առջև ծառայած խն-

4

ԱՍՓՈՓՈՒՄ

ԳԻՏՈՒԹՅԱՐ ԶԲԱՂԿԵԼ ՊԵՏԵ Է ԼԻՆԻ ՇՐԱՊՈՒՐԻՉ

2012-2013 ուսումնական տարում Արցախի պետական համալսարանում իրականացված աշխատանքների մասին հաշվետվությանը հանդես եկավ բուհի ղեկավար Մանուշ Մինասյանը:

Ձեկուցողը մասնավորապես նշեց, որ կրթական բարեփոխումներն ու գիտա-մշակութային գործունեությունը համալսարանում իրականացվել են բուհի զարգացման 2009-2013թթ. ծրագրի շրջանակներում: Արդեն հինգերորդ տարին է՝ համալսարանում ուսուցումը կազմակերպվում է կրեդիտային եղանակով: Անցած տարիներին Արցախի պետական համալսարանի ակտիվորեն մասնակցել է կրեդիտային համակարգի ներդրմանն ուղղված բոլոր այն գիտաժողովներին ու սեմինարներին, որոնք կազմակերպվել են ՀՀ-ում:

Մ. Մինասյանը կարևորեց սափարանական կրթությունը դասախոսական նոր կադրերի պատրաստման և գիտության տարբեր ոլորտները զարգացնելու առումով: Գիտական գործընթացն առավել նպաստակալին դարձնելու համար 2012թ. սեպտեմբերի 1-ից սափարանադասարանում և ներդրվել է կրեդիտային համակարգը: Այդ ընթացքում աճել է ինչպես սափարանների, այնպես էլ հայցորդների թիվը: Ընդ որում, 2012-2013 ուսումնական տարում երեք սափարան և հայցորդ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն:

Կարևոր ձեռքբերում է նաև 2013թ. մարտի 29-ին կնքված «Սինուփիս Արմենիա», «Ղարաբաղ Տեյեկոմ» և «Արցախի պետական համալսարան» եռակողմ համաձայնագիրը, ինչի արդյունքում բացվել է «Կապի միջոցների միկրոէկոլոգիայի սինեմներ և համակարգեր» համահամալսարանական ամբիոնը:

Մ. Մինասյանը բուհի առջև ծառայած խնդիրների շարքում առանձնացրեց համալսարանի ուսումնական գործընթացը կարգավորող ներքին կանոնակարգի մշակումը և համալսարանի կառուցվածքի օպտիմալացումը: Այս համատեքստում նա մատնանշեց ֆակուլտետների և ամբիոնների անհամաչափությունը ուսանողների թվաքանակի համեմատությամբ: Ներկայումս առկա և հեռակա բաժին-

ներում բուհն ունի մոտ 3300 ուսանող, 9 ֆակուլտետ և 25 ամբիոն կամ միջինը 370 ուսանող՝ մեկ ֆակուլտետում, 132 ուսանող՝ մեկ ամբիոնի հաշվարկով: Խոսելով համալսարանի ֆակուլտետների և ամբիոնների խոշորացման մասին, չպետք է անտեսել նաև հավատարմագրման գործընթացի պահանջներն ու որոշ ամբիոնների անհամապատասխանությունը դրանց, նկատեց ղեկավարը: Եկամտների շուրջ 77%-ն ուղղվել է աշխատավարձին և սոցապահովության վճարներին, տեղեկացրեց բուհի ղեկավարը:

Կարևոր խնդիր է նաև վարչական ապարատի օպտիմալացումը: Այս շեշտումով Մ. Մինասյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի աշխատողների ավելի քան 55%-ը բաժին է ընկնում վարչական, օժանդակ և տնտեսական ապարատին: Միևնույն ժամանակ, լուրջ մարտահրավեր է համալսարանի կադրային ներուժի երիտասարդացումը: Արժ արժեքների միջին տարիքը 65 է, որոշներին՝ 55, ավագ դասախոսին՝ 47, դասախոսին՝ 45: Տվյալ առնչությամբ ղեկավարը իրավացիորեն նկատեց. «Սա, իհարկե, միայն համալսարանի ուժերով լուծվող խնդիր չէ, այլ պահանջում է պետական նպաստակառուցված քաղաքականություն: Գիտությանը զբաղվելը պետք է հրապուրիչ լինի երիտասարդի համար, այսինքն՝ այն դժվարությունները, որոնք հաղթահարում է գիտնականը և այն կարողությունները, որոնք պահանջվում են նրանից, պետք է արժանի հատուցում ունենան»:

Մ. Մինասյանի գնահատմամբ, ուսման վարձավճարների անփոփոխության պարագայում անհրաժեշտ է կիրառել գեղջերի ճկուն, առավելապես ուսման առաջադիմությունը խթանող մեխանիզմ, որի շրջանակում հարկ է վերանայել գործող կարգերը: ՀՀ առաջատար բուհերում կիրառվում է ուսանողների վարակալորում համակարգը, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետ լուծել առնվազն երկու խնդիր: Նախ, որ բուհը զգալիորեն թեթևանում է սոցիալապես անապահով ուսանողների վարձավճարները զանազան ղեկավար բեռից, և երկրորդ՝ նվազում է ուսանողների անմիջա-

կան կախվածությունը ծնողների նյութական հնարավորություններից, բարձրանում է նրանց ինքնուրույնության աստիճանը, նշեց ղեկավարը:

Արժ ՊՈԱԿ-ի 2013 ֆինանսական տարվա գործունեության և 2014-ի եկամուտների ու ծախսերի նախահաշվի նախագծի մասին զեկուցումով հանդես եկավ գլխավոր հաշվապահ Գոհար Սարգսյանը:

Ձեկուցման շուրջ հնչեցին ելույթներ: Մասնավորապես, Արժ ղեկավարի հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտալի Յարամիշյանն իր ելույթում անդրադարձավ ուսանողների ինքնակազմակերպման, ինքնակառավարման և շահերի պաշտպանության ձևավորման խնդիրներին: Նա տեղեկացրեց, որ արդեն մշակվել է ընդունվել են ներքին գործունեությունը կանոնակարգող մի շարք արժեքավոր փաստաթղթեր:

Արժ մանկավարժության ֆակուլտետի ղեկավար Արզիկ Մխիթարյանի համոզմամբ՝ բուհը լավագույն արդյունքներ կունենա այն դեպքում, երբ ստանա լավ գիտելիքներով ուսանողներ, ովքեր կձգտեն անել այն, ինչ պահանջվում է իրենցից: Այս առումով ղեկավարը կրթության պատասխանատուների ուշադրությունը հրավիրեց դպրոցների թողարկած շրջանավարտների վրա:

Պատմության և քաղաքագիտության ֆակուլտետի ղեկավար Վալերի Ավանեսյանի խոսքով՝ բարեփոխումներն անհրաժեշտություն են, և համակարգը էլ վերանայման կարիք ունի: Սակայն երկու տարին մեկ կամ ամեն տարի վերանայել նույն դրույթները՝ ճիշտ չէ: Նրա խոսքերով՝ կրթության համակարգը պահպանողական ոլորտ է, և այստեղ պետք է փոքր-ինչ զգուշություն ցուցաբերել:

Արժ խորհուրդը ղեկավարի մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատեց բավարար: Հաստատվեց 2014 ֆինանսական տարվա նախահաշվի նախագիծը:

Խորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց Արա Հարությունյանը: Անդրադառնալով օպտիմալացման խնդրին՝ վարչապետն ասաց, որ սկզբունքորեն դեմ չէ դրան, սակայն գործընթացը պետք է իրականացնել զգուշ-

րեն, սահուն և համահունչ, որպեսզի սոցիալական խնդիրներ չառաջանան: Դպրոցներին և որակյալ մասնագետների պատրաստմանը վերաբերող խնդիրների առնչությամբ կառավարության ղեկավարը որոշ առաջարկություններ արեց: Մասնավորապես, նա առաջ քաշեց հեռավար ուսուցման գաղափարը, ինչն այսօրվա դրությամբ բացակայում է ինչպես բարձրագույն կրթության, այնպես էլ մյուս բնագավառներում առհասարակ: Վարչապետի համոզմամբ՝ այս կերպ, թերևս, հնարավոր կլինի լրացնել մասնագետների պակասը: Եվ առաջիկա տարիներին դա պետք է դառնա կրթության հիմնական ուղղություններից մեկը:

Ուսման գեղջերի խնդիրը Ա. Հարությունյանը որակեց ծանր ու դժվարին: Այսօր ավելի ազատական է բարձրագույն կրթությունը, բայց վճարովի համակարգը էլ իր հերթին խնդիրներ է առաջացնում սոցիալապես անապահով խավերի համար: Կառավարությունն այս հանգամանքը հաշվի առնելով է հենց, որ այս տարի Արցախում չի բարձրացրել ուսման վարձավճարները: Նա առաջարկեց որոշել առաջադիմության կոնկրետ ցուցանիշ ու դրանով առաջնորդվելով՝ արտոնություններ սահմանել ուսանողների համար: «Եթե կան խիստ կարիքավոր, սոցիալապես անապահով երեխաներ, մենք պատրաստ ենք այլ աղբյուրներից ֆինանսավորել ու՝ մի պայմանով. այդ երեխաները պետք է լավ սովորեն», - ասաց վարչապետը:

Մի շարք ոլորտներում, հատկապես գյուղատնտեսության, շինարարության և զբոսաշրջության, աշխատատեղեր շատ կան, սակայն քչերն են ուզում այդտեղ աշխատել, ցավով նշեց Արժ խորհրդի նախագահը, մինչդեռ երկիրը այսօր այդ մասնագետների կարիքն ունի:

Կառավարության ղեկավարը պատրաստակամություն հայտնեց աջակցել բարձրագույն խնդիրների լուծմանը՝ կոչ անելով լինել նախաձեռնող և էլ ավելի սերտացնել համալսարան-կառավարություն կապը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՔՐԻՍՏՈՍՆ ԷԼ ՈՒՍՈՒՅԻՉ ԷՐ

Կամ՝ ուղղահայաց-գաղափարական հարցադրում՝ յո՞ երթաս.



Բոլոր ժամանակներում ուսուցիչը եղել է անենահարգվածը, մեծարելին ու պատվելին, բայց բոլոր ժամանակներում չէ, որ նրա կերպարը դիմացել է ժամանակի քննությանը և դարձել ներկան ու ապագան կամրջող ճանապարհ: Հիշե՞նք թեկուզ Մ. Խորենացու «Հայոց պատմության» հանրահայտ մեջբերումը, որտեղ ողբ է ասվում նաև ուսուցչի համար...

Սոցիալական կյանքը, կրթական բարեփոխումները խորը ազդեցություն ունեցան ուսուցիչների աշխատանքի, մասնավորապես, նրանց մոտ բացասական հույզերի արթնացման վրա: Ցավոք, մասնագիտական այրման երևույթը, ավելի ճիշտ՝ համախտահիշը, բնորոշ է դարձել նաև ուսուցչի մասնագիտությանը: Մասնագիտական և հուզական «խլությունը» դարձել է մի շարք ուսուցիչներին բնութագրող որակ: Ըստ որում, այս երևույթը սկսել է նկատվել նաև այն ուսուցիչների մոտ, ովքեր հարաբերական համեմատությամբ ստանում են բարձր աշխատավարձ: Մասնագիտական հմտություններ-

ի անկում և արժեքային համակարգի դեգրադացիա են ապրում բոլոր այն ուսուցիչները, որոնց չի հետաքրքրում աշակերտների առաջադիմության ցուցիչը, մինչդեռ սա ուղեղի մորմոք պետք է լինի, նրանց դաստիարակության որակը, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ուսուցիչ-ուսուցիչ միջանկյալները: Պետք է ասել, որ ուսուցչի արժեքահամակարգային դեգրադացիան կարող է պայմանավորված լինել սոցիալական բաղադրիչներով, բայց կարևորագույն հանգամանքներ են նաև մասնագիտության ոլորտում առողջ ինքնագնահատականի ձևավորումը (օպտիմալացումը) և բարձրագույն կամ ցածրագույն մասնագիտական ինքնագնահատականը չարիքներ է ծնում), դպրոցի տնօրինության կամ վերահսկող մարմինների կողմից ոչ լիարժեք վերահսկումը, այս կամ այն ուսուցչին առանձնաշնորհումներ տալը և այլն: Ըստ հաճախ էլ ուսուցիչ և ծնող հարաբերություններն ակամայից տեղափոխվում են կենցաղային համագործակցության դաշտ, և տարրական դասարանի աշակերտի անհատական պարամունքների «անհրաժեշտության» պատճառով ուսուցչի տունը, երբեմն նաև կենցաղը ծնողի համար դառնում է բաց տարածք: Քավ ինձ, բայց սա դառնում է կոնկրետ նպատակների միտված «պատվերով համերգ», որից նախ և առաջ նյութական արժեքի ակնկալիք կա: Թող ինձ ներեն բոլոր այն եզակի ուսուցիչները, ովքեր այդ աշխատանքն անում են անշահախնդիր: Այսպիսի շփումներն արմատապես փոխում են ուսուցիչ և ծնող դասական հարաբերությունների մանկա-

վարժական ֆոնը, ինչը չի կարող բացասաբար չափազանցաբար ուսուցչի՝ հասարակության մեջ գրաված դիրքի ու հեղինակության վրա: Իսկ ի՞նչ է տեղի ունենում, երբ ուսուցիչը հայտնաբերում է, որ իրեն աշակերտողը ինչ-ինչ պատճառներով նախընտրել է անհատական պարամունքներ անցկացնել մեկ այլ ուսուցչի մոտ: Նա պատրաստ է վրեժխնդրության և ենթագիտակցական ու նաև գիտակցական նախատրամադրվածությամբ ու նախապաշարվածությամբ «հարաբերություններ կառուցել» տվյալ աշակերտի հետ: Այսպիսի լարվածություն մեջ բարձր դասարանի աշակերտների ընկալումներում կարող է ծայրահեղ վարկաբեկման հասցվել ուսուցչի վարքային ու մասնագիտական մոդելը: Կա նաև խնդրի մյուս երեսը. արհեստական գնահատականների շարքում դասավանդող ուսուցչի մոտ պարամունքների գնացող աշակերտների նկատմամբ: Պարապող աշակերտի նկատմամբ դասավանդող ուսուցչի մոտ պատրանքի հասնող լավատեսական դիրքորոշումներ են մշակվում: Արդյունքում դասարանական մթնոլորտում անհեթեթության է հասցվում գնահատականների ոչ միայն իրավաբանական, այլև բարոյական կողմը, որն ավելի կարևոր է: Այսպիսի պայմաններում աշակերտների մոտ կարող են դիտվել վարքային այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք անզգա վերաբերմունքն ու ոչ ճկուն վարքագիծն են: Բազմիցս ապացուցվել է, որ ուսուցչի անձի հոգեբանական և ուսակալան վիճակն անդրադառնում է աշակերտի հուզականային և ճանաչողական գործընթացների վրա: Եթե այսօր աշակերտը խուսա-

փում է դպրոցական պարամունքներից և նախընտրում անհատական պարամունքները (լինում է նաև դպրոցական պարամունքների ժամերին), ապա այստեղ ակադեմիական անգաղափարներ են ցուցաբերում ոչ միայն ուսուցիչը, այլև աշակերտն ու ծնողը, և սուտը գնալով դառնում է ավելի ժամանակակից, ընդունելի և օրինաչափ: Հենց այստեղ է, որ անգաղափարները սկսում է ձևավորվել որպես մեղ անձնական ակնկալիքներն իրականացնելու միակ միջոց:

Մենք ունենք ուսուցչի կերպարի ազդեցության դերային մոդելավորման սուր խնդիրներ, որոնք նախ և առաջ կարող են լուծվել ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ: Ուսուցչի պաշտոնը բավական չէ աշակերտների վրա անհրաժեշտ ազդեցություն ունենալու համար: Կա անձնային ու մասնագիտական, բացարձակ որակների խնդիր: Մանկավարժական էնտուզիազմն ու ռոմանտիկ շատ քչերին է բնորոշ, մինչդեռ դա ազդեցության լուրջ լծակ է:

Ուսուցչի մասնագիտական որակները կարող են պահպանել միայն ժամանակավոր դժվարությունների նկատմամբ հարմարվողական ներուժ ունեցողները, որոնց ոչ թե միաջակայր կամ շուկան են թելադրում իրենց կանոնները, այլ որոնք իշխանավորներ են շուկայի և միջավայրի վրա: Երբ ուսուցիչը իրենցից չունի, նրա վարքը կախված է իր ներքին մոդելներից, որոնք շատ հաճախ կարող են եսական լինել: Բայց երբ նրա հոգում տիրապետող է դառնում իդեալների մի ամբողջ համակարգ, երբ նա ինքը գիտակցում է, որ հանուն այդ իդեալների չի կարելի չպայքարել, այս դեպքում կանքն իր

հսկողության տակ է վերցնում նրա վարքը: Այս իմաստով չնչին իդեալները չեն կարող ոգեշնչման աղբյուր լինել: Իդեալներ չունեն ուսուցչության բարձրությունից ցածր կանգնածներ: Նրանք սուկ հացի խնդիր լուծողներ են, և որքան էլ դժվար լինի խոստովանելը՝ այսօր մեր աշակերտության արժեքային կողմնորոշումներում մեր ուսուցչության հայելային արտացոլումն է:


Մեր օրերում սահմանում տիրող կարվածության պայմաններում ճիշտ կրթության ու դաստիարակության խնդիրը մշտապես օրակարգային է: Ուսուցիչը հոգևոր ու գաղափարական դիրքերի գերագույն իրանմատարն է, իսկ սերունդը՝ դիրքապահը: Գուցե խստություն հնչի ավաճիս մեջ, բայց Արցախյան պատերազմում հաղթել է խորհրդային դպրոցի ուսուցիչը և ոչ թե ազգային զարթոնքի ռոմանտիկան: Մենք բոլորս, ուսուցչություն՝ առանձնապես, պատասխանատվություն ունենք մեր երկրի վաղվա օրվա համար:

Պատմության ընթացքը ենթադրում է հավերժական դարձ, այսինքն՝ ի շրջանս յուր մեխանիզմը գործում է բոլոր ոլորտներում՝ նաև կրթության ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտում: Դեպի ապագա տանող ճանապարհի խորքում կա անցյալ ու ներկա, որը պետք է խարխիս դառնա լուսավոր տեսլականի համար: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր հետագիծը, որը բունտերանգի էֆեկտով ենթադրում է վերադարձ: Այժմ՝ ուղղահայաց-գաղափարական հարցադրում՝ յո՞ երթաս... ուսուցիչ:

Լուսին ԴԱՐԱՍԻԱՆՅԱՆ
ԼՂՀ ԿԳՆ մասնագիտական կրթության բաժնի պետ

ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԽԱ...



ԱՄԵՆ ԱՆՎԱՐ ՄԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

ընթացիկ գնահատում կատարվում է երկու առարկաներից, այն էլ՝ ավագ դպրոցում և միայն 11-րդ դասարաններում:

ՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԱՆՈՒՄ Ե

Արտաքին ընթացիկ գնահատմանը դպրոցների հարյուրտոկոսյա ընդգրկվածությունն ապահովելու համար ԳԹԿ-ից պահանջվել է իրականացնել կազմակերպչական մեծ աշխատանքներ, ինչի արդյունքում համոզվել են, որ կարելի է վստահել դպրոցներին, երբ վերջիններս էլ եկել են այն համոզման, որ պետք չէ խաբել ոչ ոքի՝ ներկայացնելով կեղծ արդյունքներ: Ինչպես հայտնի է, արտաքին ընթացիկ ստուգումը սկզբնական շրջանում անցկացվում էր ԳԹԿ ներկայացուցիչների վերահսկողությամբ: Աստիճանաբար այդ շրջանակն ընդլայնել են՝ վերահսկողությունը թողնելով դպրոցի տնօրենի հայեցողությանը: ԳԹԿ-ն իր սակավ աշխատակազմով և սեղմ ժամկետում ու տեխնիկական հնարավորություններով չի կարող իր առջև դրված խնդիրները լիարժեք իրականացնել, այն է՝ բոլոր 213 դպրոցները, մասնաճյուղերն էլ հետը, արտաքին ընթացիկ գնահատման ենթարկել: «Մի բան ենք հասկացել, ինչքան էլ ստուգենք, մեկ է, պետք է վստահենք դպրոցի տնօրենին՝ իր ներկայացուցիչներով: Նրանք ավելի լավ են տիրապետում իրավիճակին», - ասում է Յու. Քարամյանը՝ ավելացնելով, որ դպրոցներ ուղարկված գրության մեջ նշել են, որ եթե տնօրենը վստահ չէ, որ կարող է ստուգման կարգը պահպանել, հետևաբար՝ ռեալ արդյունքներ մերկայացնել, թող տեղեկացնի: Կարգը պահպանել՝ նշանակում է անցկացնել օբյեկտիվ թեստային աշխատանք, թույլ չտալ, որ աշակերտը աշակերտից օգտվի կամ ուսուցիչը օգնի և այլն: Չի եղել որևէ դպրոցի տնօրեն, որ հայտնի, թե ի գործ է կարգին համապատասխան ստուգում անցկացնել: Ի դեպ, դրա հավաստիացումը միայն խոսքերով չի արտահայտվում: Գրավորները, որոնք ստուգվում են Գնահատման և թեստավորման կենտրոնում, պարզ ցույց են տալիս, թե ովքեր են կարգը պահպանել, ովքեր՝ ոչ: Եվ երբ արդյունքներն ուղարկվում են դպրոցներ, ԳԹԿ-ի կողմից յուրաքանչյուրի դիմաց, որոնց արդյունքները կասկածելի են, դրվում է հարցական նշան: Չեսաքրքիրն այն է, որ երբևէ տվյալ դպրոցի տնօրենը չի դիմել ԳԹԿ, թե ինչու է հարցականի տակ դրվել իրենց արդյունքները: Ամեն ինչ պարզ է: Առաջին տարիներին կասկածելի էր արդյունքների 25-30%-ը, այժմ այն կազմում է 8%: ԳԹԿ կողմից այս տարի վերահսկվել են միայն Ստեփանակերտի դպրոցները: Իսկ շրջանների վերահսկողությունը թողնվել է դպրոց-ների տնօրինությանը: Մարտակերտի շրջանն առաջինն է կարգի պահպանման առումով. ոչ մի դպրոցի արդյունքների դիմաց հարցական նշան չի դրվել: Մյուս շրջաններում որոշ չափով եղել են: Իհարկե, միայն հարցական դնելով չի ավարտվում ԳԹԿ-

ի դիտողությունը, այն հետագա քննարկման թեմա է դառնում տարբեր կարգի մանկավարժական խորհրդակցություններում և ընդունվում ի գիտություն: Թեման ընդհանրացնելով՝ ասենք, որ ԳԹԿ տնօրենը մեծ հաջողություն է համարում արտաքին ընթացիկ ստուգման կազմակերպչական մասի նման արդյունավետությունը, երբ կասկածելիության աստիճանը 8% է, ինչը նշանակում է, որ կարողացել են հասնել դպրոցների վիճակի գրեթե ճիշտ գնահատման, որը հնարավորություն է տալիս ճիշտ վերլուծություն կատարել և քաղաքականություն մշակել:

Ճիշտ թեստերի կազմումն առաջին խնդիրն է, ինչին կարողացել են հասնել բոլոր թեմաները, դասագրքերը, ծրագրերը ուսումնական հաստատությունների դասավանդող ուսուցիչների, մեթոդիկավորման նախագահների, այնուհետև մշակված թեստերը ԿԳՆ համապատասխան մասնագետների հետ քննարկման արդյունքում: Նման նախապատրաստությունից հետո, որը ոչ միայն ֆիզիկական, մտավոր լարվածություն, այլև նյութական մեծ ծախսեր է պահանջում, ԳԹԿ տնօրենը կարծում է չպետք է սխալ քայլ կատարել: Այդ իսկ պատճառով նա մեծ կարևորություն է տալիս կազմակերպչական մասին:

ԹՎԵՐՆ ԱՐՏԱՑՈՒՄ ԵՆ ՊԱՏԿԵՐ

Ընդհանուր ստուգվել է շուրջ 900 դասարան՝ 6112 աշակերտների ընդգրկմամբ: Համեմատության համար նշենք, որ 2010-2011 ուստարվա երկու կիսամյակում ստուգվել է 6553 աշակերտ, 2011-2012 ուստարում՝ 6890, 2012-2013-ում՝ 2012-2013-ում՝ 10068:

Ամենալավ արդյունքներ ցույց են տվել 4-րդ դասարանները: 10-բալանոց համակարգում՝ անբավարար՝ 14%, բավարար՝ 44%, լավ՝ 36%, գերազանց՝ 6%:

Դասարանները բարձրանալով՝ արդյունքներն իջնում են:

Բայց ընդհանուր վիճակը գլխավոր վերլուծաբանը նորմալ է համարում: «Հիմա մեր վիճակն այսպիսին է՝ 20-23% անբավարար: Մեր վատ

կողմը գերազանց գնահատականների քիչ քանակն է՝ 3-4%», - ասաց նա:

Ընդհանուր առմամբ, արդյունքներն այսպիսին են.

- 0-3 միավոր - 24%
- 4-6 միավոր - 50%
- 7-8 միավոր - 23%
- 9-10 միավոր - 3%

Կատարվել է վերլուծություն ըստ շրջանների: Ստեփանակերտ քաղաքում, որտեղ վերահսկել են ԳԹԿ ներկայացուցիչները, արդյունքները հետևյալն են.

1907 աշակերտից անբավարար է ստացել 440-ը (23%), բավարար՝ 883 հոգի(46%), լավ՝ 508 (27%), գերազանց՝ 76 (4%): Շրջանների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ տարբերությունները քիչ են, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ կարգը պահպանվել է (եզակի դեպքերը չհաշված): 6112 հոգուց 190-ն է ստացել գերազանց, և մեծ մասամբ՝ 4-րդ դասարանում (106 հոգի):

Վերլուծություն է կատարվել նաև ըստ առարկաների: Դրական շարժն ակնհայտ է, և ամենից առաջ բացասական գնահատականների նվազման, այսինքն՝ առաջադիմության բարձրացման առումով: Վերցնենք մաթեմատիկա առարկան: Չորս տարի առաջ, ընդհանուր առմամբ, անբավարաները կազմում էին 36%, այնուհետև իջնելով՝ 25%, այսօր 14% է: Այսինքն՝ համապատասխան միջոցառումներն իրենց արդյունքը տվել են, ինչը չի կարելի ասել գերազանցների մասին. Ստեփանակերտում այն կազմում է 4%, հանրապետությունում՝ 3%: Հենց դա է մեր գլխավոր մտահոգությունը՝ որակի բարձրացումը: Ցավալի է, որ Ստեփանակերտ քաղաքում 8-րդ դասարանում գերազանց ստացող չի եղել:

Բայց անբավարարների քանակը ԳԹԿ տնօրենը նորմալի մեջ է համարում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2010-ից անբավարար գնահատականների կտրուկ նվազում է արձանագրվել՝ 35%-ից նվազելով 23%-ի: Բայց հասել է մի աստիճանի, որ չի փոխվում, տեղում դրվում է: Յու. Քարամյանի կարծիքով, որպեսզի կտրուկ առաջընթաց լինի, պետք է նոր միջոցառումներ անցկացնել:

ԱՆՇԱՏԱՆՔ ՈՒՄՈՒՑՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համեմատությունը Ստեփանակերտի և շրջանների դպրոցների միջև էական տարբերություններ չի արձանագրում: Լավ է, որ չկան: Մյուս կողմից էլ՝ պետք է լինեն, կարծում է ԳԹԿ տնօրենը: Եթե գյուղական դպրոցում տվյալ առարկայից մեկ մասնագետ է, և մրցակցություն չկա, ու փաստորեն կատարելագործվելու ուղղությունները քիչ են, ապա նույնը չի կարելի ասել մայրաքաղաքի դպրոցների մասին: Առավել ցավալի է, որ բնագիտական առարկաներից խորացված և ընդհանուր դասարաններում արդյունքները դարձյալ շատ չեն տարբերվում, իսկ խորացված դասարաններում հանրահաշիվ առարկայից բացասական գնահատականները կազմել են 37%: Բնագիտական հոսքում 23 հոգուց 14-ը անբավարար է ստացել, ինչն անթույլատրելի է:

Առաջադիմության և ուսման որակի առումով հասել ենք մի մակարդակի, երբ այն տեղից չի շարժվում: Նշանակում է, որ գործադրված բոլոր միջոցառումները (դասագրքերի, ծրագրերի բարելավում) իրենց արդյունքը տվել են, մնացել է ուսուցիչների մասով: ԳԹԿ տնօրենը, ձեռնարկվելիք քայլերից է համարում ուսուցչական համակազմի որակական բարելավման ուղղությամբ աշխատանքները՝ միևնույն ժամանակ գտնելով, որ մասնագիտության ընտրության խնդիր էլ կա. մանկավարժական մասնագիտությունները պետք է համալրեն գիտելիքներ ունեցող շրջանավարտները և որ ամենակարևորն է՝ հարկ է անցկացնել համալիր միջոցառումներ: Փոփոխություններ, որոնք կվերաբերեն և՛ դպրոցին, և՛ բուհին, և՛ հասարակությանը: Շուկայական հարաբերություններով տնտեսությունում գիտելիքը և նրա կրողն արժանավոր տեղ պետք է գրավեն ու պատշաճ գնահատվեն:

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԼԳՀ գնահատման և թեստավորման կենտրոնն ընդհանրացրել է 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ գնահատման արդյունքները, որն անց է կացրել 2013թ. դեկտեմբերի 2-12-ը: Արդյունքների ամփոփման համար դիմեցինք ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանին:

Ստուգումներն անց են կացվել 4-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարաններում՝ հետևյալ առարկաներից. 4-րդ դասարան՝ մայրենի, մաթեմատիկա, ռուսաց լեզու, 6-րդ դասարան՝ մաթեմատիկա, աշխարհագրություն, անգլերեն, ֆրանսերեն, 8-րդ դասարան՝ հայոց լեզու, հայոց պատմություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, 11-րդ դասարան (ընդհանուր հոսք)՝ հայոց լեզու, հայոց պատմություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, ռուսաց լեզու, խորացված դասարաններում՝ հայոց լեզու, հանրահաշիվ, հայոց պատմություն, ֆիզիկա, քիմիա, ռուսաց լեզու, անգլերեն: Յու. Քարամյանի տեղեկատվությամբ՝ ԳԹԿ-ի կողմից այս տարի մտցված նորություններից մեկն այն էր, որ 4-րդ, 6-րդ, 8-րդ դասարանների առարկաների ընտրությունը կատարել են ուսումնական հաստատությունները: Չուզանա դասարաններում ստուգումն անցկացվել է տարբեր առարկաներից: Դրա առավելությունը ԳԹԿ տնօրենի համոզմամբ այն է, որ դպրոցի տնօրինությունն ավելի լավ է իմանում կրթօջախի վիճակը, և թե որ առարկաներից է նպատակահարմար ստուգում անցկացնել: Իսկ 11-րդ դասարաններում առարկաների ընտրությունը կատարել է ԳԹԿ-ն:

Սկսած 2010 թվականից, ԳԹԿ-ն արտաքին ընթացիկ ստուգումներ է անցկացնում հանրապետության դպրոցներում: Սկզբում ընդգրկելով որոշակի թվով դպրոցներ և դասարաններ ու տարեցտարի ավելացնելով դրանց թիվը: Յու. Քարամյանի կարծիքով՝ իրավիճակի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար պետք է հանրակրթական բոլոր ուսումնական հաստատությունները ենթարկվեն արտաքին ընթացիկ ստուգման: Եվ արդեն հասել են այդ մակարդակին. հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում անց է կացվել ընթացիկ գնահատում: Դա էլ կարելի է համարել նորություն: Համեմատության համար ասենք, որ ՀՀ-ում արտաքին

ՀԱՅՐԵՆԻՆ ՄԻԱՅՆ ՈՂԵՂԵՆ ԿԱՆՉ ԶԷ...

Հերթական մարդասիրական առաքելությամբ հունվարի 24-ին Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում հյուրընկալվել է արցախցիների կողմից հարգված ու սիրված, հարազատ ժողովրդի արժանի գավակ Գուրգեն Մելիքյանը՝ աշակերտներին կոչիկներ բաժանելու առիթով:

Մեծն Նժդեհի «Կուսակցության հետ, բայց ազգիս համար» հայտնի նշանաբանով ապրող ու գործող Գուրգեն Մելիքյանին շատերն են ճանաչում Արցախում: Քանզի նա ամեն կերպ ջանում է ինչով կարող է, ինչպես կարող է՝ օգտակար լինել հայրենիքին, հարազատ ժողովրդին...

Այդ, նրա օղակով ամենատարբեր հասցեներից բերված միջոցներով հայրենիքում կյանքի են կոչվում ամենատարբեր ազգօգուտ ու հայրենամուտ ծրագրեր՝ կրթական, մշակութային, մարդասիրական, սոցիալական, ժողովրդագրությունը բարելավելու նպատակով բազմազավակության խրախուսում, ծառատունկ և այլն, և այլն... Բարեբախտաբար, այս շարքը կարելի է շարունակել...

Այդ, հայրենիք միայն ողբերկ կանչ չէ, հայրենասիրությունը միայն հայրենիքի նկատմամբ սերը չէ: Դա ան-

համեմատ ավելին է, դա հայրենիքից իր անբաժանելիության գիտակցումն է, ուրախ ու տխուր օրերը նրա հետ միասին անբաժանելիորեն վերապրելը...

Միշտ պետք է հիշել մեր ազգային-ազատագրական մեծակառույց կոթող գորավար Անդրանիկի պատգամը. «Երբ գլուխներդ դնեք բարձին՝ քնելու, մի պահ մտածեք, թե ինչ եք արել այսօր ձեր ազգի համար»:

Առանց որևէ չափազանցության, Գ. Մելիքյանն առաջընդդրվում է նաև նշված պատգամով, ինչի համար դպրոցի ողջ անձնակազմի և անձամբ իմ երախտագիտության խոսքն են ուղղում նրան, մաղթում քաջառողջություն, երկար տարիների խաղաղ ու երջանիկ կյանք:

Տա՛ Սստված, որ նրա աստվածահաճո առաքելությունը շարունակական լինի...

Ն. ՆԱԼԲԱՆՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմն. դպրոցի տնօրեն, ԼԳՀ վաստակավոր մանկավարժ

ՊԱՆԱՊԱՆ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԱՐԺԱՆԻ ՎԵՐՁԱՓՈՒՆ

Արցախյան շարժումը ծնեց անկախություն, իսկ անկախության ամենամեծ ձեռքբերումներից է մեր ազգային բանակը, որը, հիմնվելով երկրապահ ջոկատների վրա, ազատագրեց Արցախը, պաշտպանեց մեր հայրենիքի սահմանները բոլոր կողմերում, և այսօր էլ հայ զինվորն աներեր կանգնած է սահմանին ու պաշտպանում է հող հայրենին: Այդ են վկայում վերջին օրերին կատարված սխալները սահմանում, անցած տարիների փորձությունները, երբ թշնամին հատուկ ջոկատներ էր ուղարկում՝ փորձելով ճեղքել մեր պաշտպանական գիծը, ահաբեկչական գործողություններ իրականացնել, սակայն միշտ էլ հանդիպել է դիմակայության և հետ շարժվել՝ տալով թե՛ մարդկային, թե՛ նյութական կորուստներ: Հայ զինվորի լավագույն կերպար դարձան հավերժի ճանփորդ, կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը և նրա զինակից 8 տղաները, ովքեր դիմակայեցին հակառակորդի մոտ երեք տասնյակ հատուկ պատրաստված ահաբեկիչներին, վնասվածքներ ստացան հեռու՝ մաս լավ դաս տալով, հասցնելով մարդկային լուրջ կորուստներ: Ցավելով հերոսի կորուստի համար, խոնարհվելով նրա ծնողների առաջ՝ գտնուում են, որ մահան մարտիրոսները չպետք է մոռացվեն, այլ միշտ պետք է խոսվի նրանց մասին: Հայ պատանի զինվորները գիտակցում են իրենց պարտքը, որ ամեն մի անգուցալուծվելու, վերջապես հոգով թույլ լինելու դեպքում տանուլ կտանք: Մենք Արցախյան գոյամարտում հաղթեցինք, քանի որ ուրիշ ելք չուներինք, պարտությունը ազգի կորուստն էր: Պատահական չէր Մոմթի խոսքը. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք հայոց պատմության վերջին էջը»: Եվ մենք հաղթեցինք ու նոր էջ գրեցինք և կշարունակենք բազում հատորներ գրել՝ հիմնականում հզոր բանակի առկայության դեպքում: Ուստի ազգովի պետք է սրբի պես պաշտենք մեր բանակը, սիրենք ու նրա կողքին լինենք, աջակցենք, քաջալերենք:

«Բերձոր» ժողովրդիչների համույթի (ղեկավար՝ Յ. Գրիգորյան, դիրիժոր՝ Ա. Բալասանյան), արվեստի և սպորտի դպրոցի (տնօրեն՝ Գ. Մանուկյան) պարի խմբակների հետ մեկտեղ Բերձորում: Առավոտյան գործնասում կայացել էր տոնակա միտինգ, որին մասնակցել էին նաև Քաջաթաղի շրջանի Տիգրանավանի Պետոյի անվան միջնակարգ դպրոցի սաները և ուսուցիչները՝ տնօրեն էլա Միրզաջանի գլխավորությամբ: Աշակերտները զինվորների համար ելույթ էին ունեցել՝ երգ ու ասումներ: Հայոց բանակի 22-ամյակի առթիվ գր-



րամասի մի խումբ զինվորականներ ՀՀ պաշտպանության նախարարի, բանակային գործառնականության հրամանատարի և գործնասի հրամանատար, փոխգնդապետ Արթուր Մինասյանի կողմից պարգևատրվել էին շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով: Դպրոցի աշակերտները գործնասի ուսումնական սենյակներից մեկում նաև դաս անցկացրին: Ձերմասի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ՝ փոխգնդապետ Աշոտ Եղիազարյանը աշակերտներին ծանոթացրեց «Կալաշնիկով» ինքնաձիգ հրացանին, տեղեկացրեց ինչ մասերից է կազմված՝ քանդելով այն և հավաքելով: Այնուհետև զինվորների և իրենց զինղեկի՝ պահեստի փոխգնդապետ Ռազմիկ Պողոսյանի օգնությամբ աշակերտները կատարեցին նույն գործողությունները: Կեսօրին գործնասի զինվորներն ու սպաներն արդեն շարահանգամայն էին և սպասում էին համերգն սկսվելուն: Հաճելի է տեսնել, թե ինչպես էին վաշտ-վաշտ շարքե-

րով գալիս զինվորները, կատարում հրամանատարների հրամանները: Երջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանը, տոնի առթիվ շնորհավորելով զինվորականներին, համերգը հայտարարեց բացված, որը վարեց Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի պարուսույց էլինար Հայրապետյանը: Ռազմահայրենասիրական երգերի կատարումով համերգը բացեց Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի պարի խմբակի Կոմսակահի մասնաճյուղի պարուսույց, երգիչ-ազատամարտիկ Կարեն Մարտիրոսյանը: Արամայիս Եսայանի կողմից հնչեց երաժիշտ Արթուր Մովսեսյանի «Հայրենիքից անուշ հող չկա աշխարհում» երգը: Զինվորի համար միշտ էլ հաճելի է ինչ-որ պահ կտրվել զինվորական առօրյայից, ունկնդիր ու մասնակից լինել տոնակա համերգին, վայելել երեխաների պարն ու երգը, պարել նրանց հետ, ինչ-որ չափով կարոտն առնել հարազատների: Կարուժան Գրիգորյանի սաները կատարում են ռազմական պարեր, պարի հրավիրում զինվորներին: Հնարավոր չէ չհուզվել այս տեսարանով, երբ աղջնակներն ու պատանիները պարում են ռազմական պար՝ ոգևորելով հայ զինվորին՝ իրենց պահպանելու: Զինվորները հատկապես աշխուժացան «Բերձոր» համույթի երգչուհի Գրետա Մովսիսյանի՝ ժողովրդական երգերի կատարման ժամանակ, և պարում էին զինվոր ու դպրոցական, հրամանատար և ուսուցիչ: Կարեն Մարտիրոսյանի սաները նույնպես ռազմական պարերով ուրախացրին հայ զինվորին, իսկ պատանի երգիչներ Ռազմիկ Քերոբյանն ու Անդրանիկ Գոգոբյանը հիացրին ռազմահայրենասիրական երգերի կատարմամբ: Եղավ նաև մրցույթ գումարտակների միջև՝ որն է ավելի ակտիվ և լավ պարում: Այս անգամ էլ շատ զինվորներ փորձեցին իրենց հմտությունը պարարվեստում, և հաղթեց միասույթները: Վերջում Կարեն Մարտիրոսյանը զինվորներին սովորեցրեց պարել ազգագրական պար «Յայլի»՝ իր խմբի պարուհիների հետ: Բավականին գեղեցիկ և ուրախ պար էր: Պարուսույցը նաև տվեց բացատրություն, թե որն է պարի իմաստը: Տոնակա միջոցառումն ավարտվեց հույս

ու հավատով, որ այս փոքր ժամանակը մեծ լիցք տվեց հայ զինվորին, և յուրաքանչյուր զինվոր ավելի պարտավորվեց տեր ու պաշտպան լինել այս փոքրիկներին, տարեցներին, հայրենիքին: Ձերմասի շտաբի պետ, փոխգնդապետ Արթուր Հայրապետյանը շնորհակալություն հայտնեց այցի առթիվ՝ հավաստելով, որ բանակը միշտ կմնա հայրենիքի պատվարը: Բանակայիններին շրջվարչակազմի անունից շնորհավորեց վարչակազմի ղեկավարի տեղակալ Արտավազ Ալեքսանյանը՝ նշելով, որ շրջանի բնակչությունը պարտաստ է մշտապես աջակցել զինվորին: Ձրույցի ընթացքում գործնասի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, փոխգնդապետ Աշոտ Եղիազարյանը կարևորեց բանակ-հասարակություն կապը.

- Անչափ ուրջունելի և կարևոր միջոցառում էր. առաջին հերթին, հանդիպումը զինվորների հետ ամրապնդում է ռազմահայրենասիրական դաստիարակությունը նախագորակույցային պատանիների, ինչու չէ, նաև աղջիկների շրջանում: Երկրորդ՝ զինծառայողների մոտ բարձրանում են բարոյականային հատկանիշները: Զինվորը զգում է հասարակության ուշադրությունն իր նկատմամբ և ավելի է պարտավորվում: Ինչ վերաբերում է համերգին, շնորհակալություն բոլորին, - ասաց Ա. Եղիազարյանը, ով համերգի ողջ ընթացքում զինվորների հետ ուրախացավ ու պարեց:

Ձրուժանի շտաբի պետը նույնպես կարևորեց հանդիպումը:

- Ուրախալի է, որ կա բանակի փոխարինող սերունդ՝ հանձնի այս պատանիների, ովքեր իրենց երգով ու պարով ոգևորեցին զինվորներին, միևնույն ժամանակ իրենք էլ որոշ բան սովորեցին զինվորներից, տեսան նրանց պահվածքը: Տեսա, թե ինչպես էին պատանիները ծանոթանում զինվորների հետ, գրուցում, հարցեր տալիս, - ասաց շտաբի պետը՝ հավելելով, որ կապը հասարակության հետ անհրաժեշտություն է բանակի համար:

Միջոցառումից հետո զինվորների հետ ճաշեցինք նրանց ճաշարանում: Բոլոր երեխաներն էլ, հատկապես տղաներն ասացին, որ շատ համով էին կերակուրները, ու երբ դառնան բանակային, սոված չեն մնա: Հրաժեշտ ենք տալիս մեր պահապան-զինվորներին՝ մաղթելով անփորձանք ծառայություն և զգոնություն:

Զոհրաբ ԱՌԵՈՅԱՆ

ՀԱՅՐԵՆՅԱԿ ՊԱՇՏՊԱՆ Ե ՀԱՅՐԵՆԻ ՀՈՐԸ ՍԻՐՈՂ ԱՄԵՆ ՀԱՅ ՄԱՐԴ

1 **Ս**եծարանքի, գնահատանքի ինչքան լավ խոսքեր՝ դպրոցի

(«Հացից հետո ժողովրդի համար ամենակարևորը դպրոցն է» - Դանտե), դաստիարակի, ծնողի, հայրենիքի («Հայրենյաց քարերն ավելի տաք են, քան Բաբելոնի փռերը» - Ղ. Ալիշան) մասին:

Ու գեղեցիկ այս խոսքերի հիմքում ընկած է մի միտք, մի գաղափար. դպրոցն է այն վայրը, այն օջախը, ուր դաստիարակվում, կուփվում, հասունանում, հայրենիքի իսկական զինվոր է դառնում այսօրվա պատանին: Իսկ ուղղություն տվողն ուսուցիչն է: Նորից ու դարձյալ հիշեցվում է, որ ամեն ինչ կախված է ուսուցչից: Նա ինձ սովորեցրել է ամեն ինչ կատարել հայրենիքի համար օգտակար լինելու մղումին ենթարկվելով: Ասել կուզի՞ անչափ մեծ է, գրեթե՝ անզհաստելի ուսուցչի դերն ու անելիքը:

Թերևս պետք չէ զարմանալ ու պահի տակ ասված չափազանցություն համարել կանցելը Օտտո Ֆոն Բիսմարկի բարձր խոսքերը, որ հնչել են մոտ մեկուկես դար առաջ, 1821-ին. «Ֆրանս-պրուսական պատերազմում հաղթեց պատմության ուսուցիչը... գյուղական ուսուցիչը»:

Նման գնահատականին ոչինչ ավելացնել չեն կարող: Ի դեպ, նախարարը պարզ ու որոշակի նշում է, որ աշակերտին ռազմահայրենասիր-

րական ոգով դաստիարակելու գործում կուլեկտիվի յուրաքանչյուր անդամ իր ավանդը, իր բաժինը պիտի ունենա՝ լինի մայրենի, մաթեմատիկայի («Անհնար է հզոր պետություն առանց հզոր մաթեմատիկայի» - Նապոլեոն), քիմիայի, ֆիզիկոլոգիայի, թե ֆիզիկայի մասնագետ:

«Աշակերտի ռազմահայրենասիրական դաստիարակության համար դպրոցում անկարևոր առարկա չկա», - ասված է ուղերձում: Այսպես է մեր դպրոցներում: Ոչ, իհարկե: Հեռուից հեռու են գզում, տեսնում են, որ պատկերը բոլորովին այլ է, ու բառերն այս նույնիսկ մոտ չեն գալիս որոշ ուսուցիչների ունկնդրին:

Տնօրենը, ուսուցիչը, դասուցիչը, դասավոր պիտի խորապես գիտակցեն, որ աշակերտը, որպես հայրենյաց պաշտպան, ձևավորվում է բոլոր առարկաների ուսուցման արդյունքում: Այս ճշմարտությունն է, որ ականջներին օղ պիտի անեն և՛ նոր՝ նոր դասարանի դուռը ճանաչածները, և՛ թռչակային տարիքի շեմին կանգնածները:

Պիտի իմանան ու հաշվի առնեն, որ ընդամենը մի քանի տարուց հետո այսօրվա ուսանողն ու աշակերտն են լինելու ղեկին, նրանք են տանը, դպրոցում, բակում ու բուհում ստացած իրենց դաստիարակությամբ, գիտելիքներով, որդեգրած սկզբունքներով և հայրենասիրությամբ առաջնորդելու մեր ժողովրդին:

- Աշակերտին պիտի սովորեցնել, որ եթե ուզում են լավ ապրել հայրենիքում, - կարդում ենք ուղերձում, - պիտի անհուճորեն սիրեն այն: Իսկ եթե սի-

րում են՝ պիտի լավ սովորեն, խելացի, ուսյալ և օգտակար քաղաքացի դառնա երկրիդ համար:

Հիանալի միտք, որ պիտ սերտեն, անգիր անեն դասարան մտնողները, գիտելիք տվողները:

Այնուհետև իր ուղերձում նախարարը շեշտում, նորից է հիշեցնում, որ «հայրենիքի պաշտպանը» ընդհանուր, հավաքական հասկացություն է, և «հայրենիքի պաշտպան» ասելիս այսօրվա երիտասարդը չպետք է պատկերացնի միայն գեներ ձեռքին պատերազմի դաշտում պայքարող զինվորին: Մեր երկրի համար անչափ կարևոր է ու օգտակար, որ «հայրենիքի պաշտպան» հասկացությունն ըմբռնեն ու ընդունեն լայն իմաստով, որովհետև մեծ հաշվով հայրենիքի պաշտպան է յուրաքանչյուր մարդ, ով պարզապես իր երկրի նվիրյալ քաղաքացին է, ով նվիրումով ու պատասխանատվությամբ է կատարում իր գործը:

Ի վերջո, գենը ասելով՝ մենք չպետք է ինքնաձիգ կամ տանկ հասկանանք: Շատ ավելի գորեղ են գիտելիքով ու համապատասխան ունակություններով զինվածները: Արտաքին մարտահրավերներին դիմագրավելու համար մեր երկրի հիմնական քաղաքիչները տնտեսությունը, կրթությունը, գիտությունն ու մշակույթն են, և այս ճակատներում պայքարելիս մեր գեները պիտի լինեն ժամանակակից գիտելիքը, գաղափարական պատրաստությունը, խելացի դիվանագիտությունը, ազգային համախմբվածությունը:

Հետևություն: Ուժերի լարում է

անցկացնելու համար:

Կարևորը. ձեռք պիտի քաշել թյուր ու միամիտ դատողություններից ու մեկընդմիջտ սեփականել ուղերձում շեշտարված այն միտքը, որ, հիրավի, հայրենյաց պաշտպան են բոլոր նրանք, ովքեր խոճով, խնամքով ու որակով են կատարում իրենց վստահված գործը: Հողագործը՝ իր աճեցրած առատ բերքով, շինարարը՝ իր կառուցած անուր շենքով, աշակերտը՝ օրինակելի կտրքով, գրքի նկատմամբ ունեցած սիրով, նկարիչը՝ իր մնայուն կտավով... Ամենքը, ում համար հայրենի եզերքը, հայրենի հողը թանկ են ամեն ինչից: Իսկ նրանք բոլորը, ինչպես գիտենք, անցնում են ուսուցչի ձեռքի տակով: Եկեք, ուրեմն, ջանանք ու ձգտենք լինել մեր տեղում, մեր դերում:

Այլ կերպ ասած՝ մենք էլ մեզ համարենք հայրենյաց պաշտպաններ, առաջնագծում գտնվող զինվորներ, Եսազույնն առաջ տանողներ: Ի՞նչ փույթ, որ հրագեն չենք կրում և սպայի կամ շարքայինի բաճկոն չենք հագնում: Զե՞ որ կրթական ոլորտը և յուրօրինակ ճակատ է, ուր բարձունքները նվաճվում են անսղմուկ, առանց գրոհի ազդանշանի, առանց օգնության տազանապալի կանչերի, ճակատ, ուր մարտի սկիզբն ու ավարտն ազդարարում են ոչ թե ռումբի, ակամհի հուժկու շառաչը, այլ Ձանգի այնորժալուր դողանքը...

Ու ինչքան լավ է, որ այսպես է:

Միջալել ԲԱԼՍԱՆ
20-րդ դարի Արցախի
լավագույն մանկավարժ

ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՄԱՆԿԱՊԱՐԵՇԶԸ՝ ԿԱՐԵՎՈՐ ՕՂԱԿ ԵՐԵՄԱՅԻ ՃԻՇՏ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ



կազմակերպելու հարազատ օջախում իրենց սուրբ պարտականությունները:

Ինչպես տնօրեն Դ. Աբրահամյանն է նշում, մանկապարտեզում գործում է 4 խումբ՝ երկու փոքրերի, մեկ միջին և մեկ ավագ, հաճախում է շուրջ 140 երեխա: Երեխաների հաճախումները կարելի է համարել բավարար: 2013թ. թողարկել են 34 նախադպրոցական:

Մանկապարտեզում աշխատում է 25 հոգի:

2012-ին ավագ խմբի դաստիարակ Գայանե Գայրուսյանն արժանացել է «Տարվա լավագույն դաստիարակի» կոչման, ինչը մեծ պատիվ է մանկապարտեզի համար և հպարտության արժանի: Մանկապարտեզն ունեցել է և ունի վաստակաշատ ու երիտասարդ դաստիարակներ, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում՝ իրենց պարտականությունները բավարար մակարդակով իրականացնելու:

Այստեղ մշտապես հետևողական ուշադրություն է դարձվում երեխաների առողջական վիճակի վրա:

Մնուկը մատուցվում է պահանջվող նորմերին համապատասխան: Օգտվում են միայն տեղական թարմ հունքից:

Ամառվա ընթացքում կազմակերպվել են էքսկուրսիաներ, զվարճալիքներ, բեմականացումներ, տիկնիկային թատրոնի ցուցադրում և այլն, ինչն առավել հետաքրքիր է դարձրել երեխաների համար մանկապարտեզ հաճախելը:

Տնօրենի խոսքերով՝ բավականին աշխատանքներ են կատարվում: Յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգ են կացվում ծնողական ժողովներ, որոնց հիմքում ընկած է ծնող-մանկապարտեզ ամուր կապը: Զննարկվում են կազմակերպչական հարցեր:

Կարևոր դեր ունի մանկավարժական խորհուրդը, որի կողմից քննարկվում են մանկավարժական բոլոր հարցերը: Տոնական և նշանավոր օրերին պարտադիր նշվում են տոնահանդեսներ, յուրաքանչյուր խմբում՝ համապատասխան ծրագրով: Կազմակերպվում են կոմսուլտացիաներ սկսնակ դաստիարակների համար, որտեղ քննարկվում են դաստիարակի՝ երեխայի, ծնողի նկատմամբ անհատական մոտեցման հարցեր:

Բոլոր խմբերում կատարվում են դաստիարակներ, օպերատիվ ստուգումներ: Աշխատում են շտկել յուրաքանչյուր թույլ տրված թերություն և ճիշտ ուղու վրա դնել երեխաների հետ տարվող աշխատանքը:

Աշխատում են շտկել յուրաքանչյուր թույլ տրված թերություն և ճիշտ ուղու վրա դնել երեխաների հետ տարվող աշխատանքը:

Լուրջ ուշադրություն է դարձվում նաև դաստիարակների ինքնակրթությանը: Յուրաքանչյուր մանկավարժական խորհրդակցության քննարկվող հարցերից մեկը մանկավարժի ինքնակրթության պլանի ստուգումն է:

Մանկապարտեզը ձեռք է բերել համակարգիչ, որը կարևոր է տարբեր աշխատանքների կազմակերպման համար:

Ձեռք են բերել նաև խոհանոցի գազօջախ, ինչի կարիքը սուր կերպով զգացվում էր:

Մանկապարտեզի ջեռուցումն իրականացվում է փայտի վառարանների միջոցով: Ժամանակին և պահանջվող քանակությամբ մթերվել են վառելիքի ու վառելափայտի պաշարները:

Տարվա ընթացքում յուրաքանչյուր խմբում անց են կացվում ծնողական ժողովներ, որոնց նպատակն է ծնողներին տեղեկացված պահել մանկապարտեզում երեխաների կրթության ու դաստիարակության ուղղությամբ իրականացվող գործունեությանը:

Կատարվում են ստուգումներ, որոնք դրական ազդեցություն են ունենում մանկապարտեզում իրականացվող աշխատանքի որակի բարձրացման վրա:

Կարևորագույն ձեռքբերում համարվեց շենքի տանիքի վերանորոգումը:

Դոնարա Աբրահամյանը նշեց նաև, որ կան աշխատանքներ, որոնք չեն կատարվել: Ընթաց վաղուց արդեն ենթակա է հիմնանորոգման: Սա օրախնդիր է, անհապաղ լուծման ենթակա:

Նշվեց մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր խնդրի մասին. մանկապարտեզի բակում չկա ոչ մի հարմարանք, որտեղ երեխաները կարող են զբաղվել:

Տնօրենը հույս հայտնեց, որ մանկապարտեզի շենքը մոտ ապագայում կլինի վերանորոգված, ջրածորակները՝ սարքին վիճակում, բակում կկառուցվի խաղահրապարակ՝ տարբեր խաղային գոտիներով, միևնույն ժամանակ կունենան մարզահրապարակ, որտեղ սիրով կզբաղվեն ու կխաղան մանկապարտեզի սանիկները:

Կարինե ՂԱԿԱՅԱՆ

Շնորհավորանք ՄԻՇՏ ԵՌԱՆՊՈՒՆ ՈՒ ԿԵՆՍՈՒՐԱՆ



Անաչառ ու ազնիվ, անկարագրելի աշխատասիրության, պատասխանատվության բարձր զգացումի տեր, ընկերների ու մերձավորների սերն ու հարգանքը վայելող, աշակերտի ներաշխարհը հիանալի ճանաչող, իր սաներին անմնացորդ սիրով նվիրված...

Լրացավ Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Կիմա Ղահրամանյանի ծննդյան 60-ամյակը: Ազնիվ խառնվածքի, մարդկային բարձր հատկանիշների տեր մանկավարժը կյանքի հետաքրքիր, ուսանելի ճանապարհ է անցել: Նա իր կյանքի 35 տարին նվիրել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ գործին:

Ծնվել է 1954թ. փետրվարի 9-ին, Մարտունու շրջանի Գայրուսյանի ավարտելով Աշխատանքային միջնակարգ դպրոցը՝ 1975թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և ավարտել 1979-ին: Աշխատանքային գործունեությունն սկսել է հայրենի գյուղի ութամյա դպրոցում: Երկար տարիներ աշխատել է հ. 2, 3 և 12 դպրոցներում: Որտեղ էլ աշխատել է Կ. Ղահրամանյանը, ամենուր աչքի է ընկել աշխատասիրությամբ, առարկայի խոր իմացությամբ, գործին նվիրվածությամբ:

Գայրուսյանի համար ամենաճակատագրական օրերին բազմաթիվ նվիրյալ հայրողիների հետ մարտահաշտ մեկնեց նաև Կիմա Ղահրամանյանը՝ մաթեմատիկական իր գիտելիքներն օգտագործելով նաև հրետանային զորամասում:

Կյանքը շատ բան է սովորեցրել նրան: 60-ը այն տարիքն է, որն անվանում են իմաստության հասակ: Գայրուսյանյալու շատ առիթներ ունի ազնիվ մտավորակացնել, իր գործին նվիրված մասնագետը: Նա բարի է, լավատես, լավ խորհրդատու, ընտանիքում հոգատար հայր:

Կիմա Ղահրամանյանը մասնակցել է «МАТЕМАТИКА В ШКОЛЕ» և «КВАРТ» ամսագրերում լույս տեսած խնդիրների լուծմանը, «Լուսարար» թերթում հրատարակել մի քանի մասնագիտական հոդվածներ, ինչպես նաև մասնակցել Ստեփանակերտում կայացած մանկավարժական ընթերցումների հանրապետական փուլին:

Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը շնորհավորում է հարգելի գործընկերոջ ծննդյան 60-ամյակը, մաղթում ամուր առողջություն, մանկավարժական բեղմնավոր գործունեություն ու ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի մաթեմատիկայի մեթոդավար

ԲԱՐՈՒ ԵՎ ԼՈՒՅՍԻ ՄԵՐՄԱՆԱՆԸ



Մանկավարժի կոչումը վեհ ու սրբազան է: Այդ կոչմանը հավասարին է Շոշի Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Անահիտ Աբրահամյանը:

Ծնվել է 1964թ. հունվարի 31-ին: Ուսումնառություն ստացել է Շոշի միջնակարգ դպրոցում, այնուհետև Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ «Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա» մասնագիտությամբ: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել հարազատ գյուղի կրթօջախում՝ որպես դասվար:

Տարիների քրտնաջան ու անխոնջ աշխատանքի շնորհիվ նա բազում սերունդներ է ծանապարհել դեպի մեծ կյանք: Մայրական սիրով ու ջերմությամբ է լցված իր սաների հանդեպ, տալիս է նրանց իր հոգու ջերմությունն ու սիրառատ սիրտը, բարու, լույսի իսկական սերմնացան է: Մանկավարժական հարուստ փորձով ծանրաբեռնված մանկավարժն այսօր 50 տարեկան է, սակայն տարիքը չի խոչընդոտում, որ աշխատի նույն անսպառ եռանդով:

Միտելի տիկնիկ Աբրահամյան, թող քո աչքերում միշտ խիճոլ ու ծիծաղ լինի, մաղթում ենք քեզ առողջություն և հաջողություններ աշխատանքում:

Շոշի Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Առաջարկ

ՁԵՆԱԳԻՐ

Թե ի սկզբանե բանն էր, բանավոր խոսքը, արարչության այդ շնորհն էլ այնուհետև պիտի կերպավորվեր: Բանը պիտի խոսեր ու նկարագրվեր, ասել է թե՛ ձեռագրվեր: Գայերն էլ, ինչպես միայն իրենք, սեփական գրով պիտի մտնեին համաշխարհային գրատուն, ոչ որպես եվրոպան ու Ամերիկան՝ լատիներենով: Եվ հայկական այբուբենի հայտնությունից հետո առաջին մեր դպրամոնոգրներում առաջին դասավանդվող առարկան պիտի լինեին ձեռագրությունը: Դա աստվածային սրբազան գործ էր, հիմնավորելու էր մեր թիվ մեկ ազգային կոչումը՝ հայ բազմադարյա մատենագրությունը՝ Գայոց Մատենադարանը: Սրբազան գործը ծնելու էր երկյուղած սրբազան վերաբերմունք տառին ու բառին: Ձեռագիր, ձեռագործ, ձեռամբ... Մարդու մտքի մյուս հրաշագործությունները փոխարինող ոչինչ չեն կարող առաջադրել, ոչ կատարյալ տպագիրը գրչագրին, ոչ մեքենայականը մատենով, հատկապես հավաքված գորգին... Թերթերով հայոց ձեռագիր մատյանը՝ ակամամատեն ենք բազմազան գրության հրաշքերից՝ թռչնագիր, կենդանագիր, երկաթագիր... մտքի ինչպիսի՝ սուզումով են արարել

գրիչներն ու ծաղկողները, մանրանկարիչները, այդ Ռուլինները, Պիծակները (ձեռք երթա, դառնա ի հող, գիրս մնա հիշատակող)... Ասել է թե՛ մեր ազգային ձեռագիրն է ստեղծվել գալիք սերունդների համար: Մաշտոցի ձեռքով գրված ա Ա-ն մեզ ուղեկցել է դարեր, մեր հանճարեղ պատմիչների տքնաջանքով, գեղագրություն, վայելչագրություն. առաջին աշակերտ Կորյուն Աքանչելիից առ այսօր մեր հրամայականը: Այն թիվ մեկ պարտադիր էր անցյալի դպրոցներում՝ Գևորգյան ճեմարան, Ներսիսյան, Աղաբաբյան, մինչև իմ աշակերտական տարիները: Չեն հիշում երբ ուսումնական ծրագրերից հանվեց «Վայելչագրություն» առարկան, բայց հետպատերազմյան տարիներին ես անցել եմ այդ դասընթացը: Ժրաջան ժենյա Գալստյանը առաջին դասարանում ի՛նչ համբերությամբ բռնում էր մեր անվարժ ձեռքն ու հատուկ վայելչագրական տետրի տողերում գրել տալիս տառն այնպես, որ այն լինի իսկապես վայելուչ, ինչը որոշելու էր յուրաքանչյուրիս վաղվա ձեռագիրը, որը միայն ձեռագիր չէր, այլ նախ և առաջ՝ բնավորության հղկում ու դաստիարակություն: Եվ ընկեր ժենյայի շքեղ գրեթաձևը

մեզ համար չափանիշ էր, ուրիշ այլ կերպ չէինք պատկերացնում, ինչի շնորհիվ էլ նա մեր սիրելին էր: Դա նման էր խնամքով արված հերկի՝ բարձր դասարաններում ունենալու էինք գեղեցիկ շարադրանքներ, որ առարկայում էլ լինեին, իսկ եթե մասնագիտանալու էիր հայոց լեզվի և գրականության գծով՝ բացատրությունն ավելորդ է: Գիշո՞ւմ եք Դոստոևսկու «Ապուշը» վեպում. գեներալ Եպանչինը Միշկինին գործի ընդունելու համար ստուգում է սլավոնական գրի նրա տարատեսակ ընդօրինակումները: Այսօր նման բան չկա, բայց որ գոնե ուսուցիչներն օժտված լինեին գեղեցիկ ձեռագրով, անչափ օգտակար կլինեին մատաղ սերնդի բնավորությունն ուղղորդելու առումով: Գրչածայրով՝ թանաքամանից-ի ժամանակը վաղուց է անցել: Այսօր, արագացված մեր գործունեությունում, երբ համակարգիչը նվաճում է դրությունը, թվում է, հրատապ չէ ձեռագրի լավ ու վատը: Բայց այդպե՞ս է: Ոչ: Գրատապ է, և միշտ լինելու է վայելչագրության կարոտը: Ցանկալի կլինի «Վայելչագրություն» առարկայի վերածնունդը՝ մոռացված փորձով ու ավանդույթով:

Արրաջես ՂԱՅՐԻՅԱՆ

ՀՈՒՇ

Պ. Սևակ - 90

ՄԱՐԿԱՅԻՆ ՀՈԳՈՒ ԴՈՆԵՐԸ
ԲԱՅՈՂ ԲԱՆԱՍԵՐԸ

«Ժողովուրդը քեզ ծնեց մաքառան գնով, ծնեց ժամանակին, որպեսզի թո միջոցով երգեր իր ցավն ու ուրախությունը: Այդպիսի անհատներ ժողովուրդը հեշտությամբ չի ծնում և չի կարող հեշտությամբ բաժանվել նրանից»,- Պարույր Սևակի մասին այսպես է արտահայտվել մեծն Մարտիրոս Սարյանը:

Ժամանակի մեջ երբեք չինացող, ինքնատիպ ու լայնախոհ բանաստեղծը նորանոր գնահատականների կարծանանա մաս գալիք սերունդների կողմից, որովհետև ամեն մի սերունդ յուրովի է բացում Սևակի ստեղծագործական խառնարանի գաղտնիքները:

Ինչպես հայախոս մյուս տարածաշրջաններում, Արցախում և Սևակն ամենաշատ ընթերցվող հեղինակներից է: Այս լուսանկարն արված է ուղիղ երեսուն տարի առաջ, երբ Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի շենքում շուքով նշվեց մեծանուն բանաստեղծի ծննդյան 60-ամյակը: Աղբյուրը հիշատակում էր ընդգծված հայատյացության պայմաններում՝



Սևարուն.- Պետական, կուսակցական, հասարակական գործիչներ: Զախից աջ՝ Սարատ Մուսայելյան, Վլադիմիր Թովմասյան, Մաքսիմ Դանիելյան, Սերգեյ Գրիգորյան, Վարդան Հակոբյան, Զուլիխտա Միրզոյան, Եղիշե Սարգսյան: Ամբիոնից ելույթ է ունենում երիտասարդ գրող Կիմ Գաբրիելյանը:

ցում էին կուսակցական բյուրոյի անդամներ, տարբեր մակարդակի պաշտոնյաներ, մտավորականներ, ուսանողներ, ինչը վկայում է Պարույր Սևակի հանդեպ համաժողովրդական սիրո մասին:

Հիշյալ միջոցառման մասնակիցներից մեկի խոսքով՝ երեկոյին հանդես եկավ անգամ Ստեփանա-

կերտի մանկավարժական ինստիտուտի՝ ազգությամբ աղբյուրացի դասախոսներից մեկը, ով իր մարտիկ լեզվով արտասանեց «Մարդ էլ կա, մարդ էլ» բանաստեղծությունը: Վերջինս պակաս ոգևորությամբ չէր ծափահարում, երբ թատրոնի դերասանների կատարմամբ հնչում էր «Անլուր...»-ն: Այնքան ճշմարիտ է բանաստեղծի խոսքը, որ նույնիսկ բիրտ ազդեցիկ չի կարողացել զսպել հիացմունքը: Իսկական գրողը պիտի կարողանա խոսքի ուժով բացել մարդկային հոգու բոլոր դռները, և Սևակը դա կարողացել է:

Պարույր Սևակի մասին հիշողություններ են գրել, ոչ ոք, սակայն, թերևս այնքան խտացված չի արտահայտվել, ինչքան հենց ինքը՝ բանաստեղծը: Երբ խորհրդային գրադարանի ակտիվ ընթերցողները երեք տարուց ավելի Մոսկվայում փակի տակ էր պահում նրա ռուսերեն շախատանքը՝ անգլոգլան «Սայաթ-Նովա» մեծագործությունը, Պարույրը սրտնեղած սասել է. «Այդքան շատ հրթիռներ ու տանկեր ունեն, իմ

բառից ինչո՞ւ են վախենում»: Զտարյուն արվեստը հավասարաչափ պատկանում է անցյալին, ներկային ու ապագային: Այն ուղիղ անհնար է բաժանել ժամանակից: Ինչպես տվյալ դեպքում՝ Պարույր Սևակի քերթությունը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

7.9. Պարույր Սևակի ծննդյան 90-ամյակին նվիրված՝ հունվարի 24-ին գրական երեկո էր կազմակերպել Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարանը Մշակույթի և երիտասարդության պալատի փոքր դահլիճում: Ներկա էին ուսուցիչներ, ուսանողներ, գրքասեր հասարակության ներկայացուցիչներ՝ տարբեր տարիքի ու մասնագիտության:

Բանախոսի դերում գրադարանի տնօրեն Մարիա Խաչատրյանն էր, ով անդրադարձավ բանաստեղծի, գրականագետ-գիտնականի կյանքի ու ստեղծագործության ուշագրավ էջերին: Ինչպես միշտ, գրադարանի ակտիվ ընթերցողներ՝ մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների մի խումբ աշակերտներ և ուսանողներ հանդես եկան սևակյան խորհրդարանի ու ոգեշունչ ստեղծագործությունների ասմունքով: Կատարվեցին Կոմիտասի, Մ. Եկմայանի երգերը:

Երեկոյին ցուցադրվեցին հատվածներ Պ. Սևակի մասին վավերագրական ֆիլմից: Հիրավի, մեծ գրողի ստեղծագործությունը պատկանում է բոլոր ժամանակներին:

ԱՆՍՊԱՏԵԼԻ
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԻԼՎԱ
ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՀԵՏ

Ծննդյան 95-ամյակի առթիվ

1960 թվականն էր: Ես աշխատում էի Մարտունու շրջանի ճարտար գյուղի Դուզե Կալերի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցչուհի: Այդ ժամանակ գարնանը Սիլվա Կապուտիկյանը եկավ ճարտար՝ կոլտնտեսության նախագահ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատ Սուրեն Աղամյանի աշխատանքային գործունեության մասին ակնարկ գրելու: Բանաստեղծուհին Ս. Աղամյանի տանը հյուրընկալվեց մոտ մեկ ամիս: Այդ օրերին դպրոցի տնօրեն Սուրեն Գրիգորյանի հետ որոշեցինք կազմակերպել ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների հանդիպումը սիրելի բանաստեղծուհու հետ:

Հանդիպումը տեղի ունեցավ գյուղի ակումբում: Անվանի բանաստեղծուհու քննադատության մասին հիմնական զեկուցումից հետո դպրոցականներն ասմունքեցին Կապուտիկյանի, ինչպես նաև Չարենցի, Թումանյանի ստեղծագործություններից: Ես նստած էի առաջին շարքում՝ աշակերտների մոտ: Բեն բարձրացավ գերագնացիկ աշակերտուհի Ռուզաննա Սարգսյանը, նախ արտասանեց Կապուտիկյանի բանաստեղծություններից, ապա ասմունքեց Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ն: Ես անչափ հուզված մտեցա բեմին, գրկեցի Ռուզաննային, մայրաքաղաքի համալսարանի ճակատը: Նա մայր չուներ: Ես ծնողագուրկ սովորողների համար մոր դեր էի կատարում:

Քիչ անց բեմից ինձ մի երկտող հասավ: Սիլվա Կապուտիկյանն առաջարկել էր միջոցառումից հետո սպասել իրեն: Սպասեցի: Կանգնել էինք դեմ-դիմաց: Հարցեր էր տալիս՝ որ շրջանից եմ, որտեղ եմ ստացել բարձրագույն կրթություն և այլն: Պատասխանեցի, որ գերագնաց գնահատականներով ավարտել եմ Մարտակերտի միջնակարգը, ապա՝ Բաքվի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Ասացի նաև, որ պոեզիան իմ երազային աշխարհն է, ուստի գրում եմ նաև բանաստեղծություններ:

Զրույցի ժամանակ բացեցի սիրտս այն մասին, որ դեռևս ուսանողական տարիներին որոշել էի՝ եթե աղջիկ ունենամ, անպայման անվանելու եմ Սիլվա: Այդպես էլ կատարվել է:

Սիլվա Կապուտիկյանն ինձ հետ գրուցում էր սիրալիկ: Ինձ թվում էր, թե իմ ավագ քույրն է: Երբ լուսնը ասած, արտաքինով մենք մեծանություն ունեինք: Բանաստեղծուհին ասաց. «Ես շատ հուզվեցի, երբ գրկեցիր ասմունքող աշակերտուհուն: Հանձնել էր լսել նաև դպրոցի դիրեկտորի դրվատանքի խոսքը մանկավարժական քո օրինակելի գործունեության մասին: Երևան այցելելուց անպայման կգանգես, որ հանդիպեմք»:

Ես նրան ասացի, որ վաղուց անգիր եմ արել իր «խոսք իմ որդուն» բանաստեղծությունը: Արտասանեցի: Եվ երբ արտաբերեցի ավարտը՝

Ու տես, որդիս, ո՞ր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՞ր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն չմոռանաս...

Նա լսեց ուշադիր... Մենք ողջագուրվեցինք՝ ինչպես հարազատներ: Նա ինձ նվիրեց «Իմ հարազատները» ժողովածուն: Ընդունեցի ուրախությամբ:

Հիսուն տարուց ավելի է անցել Սիլվա Կապուտիկյանի հետ իմ հանդիպումից: Սակայն երբեք չեմ մոռացել սրտառուչ այն ժամերը, որոնք դարձել են իմ անթիվ հուշերի պայծառ էջերից մեկը:

Մարգո ԱՅԱՐՈՆՅԱՆ

Բաց դաս

Գործն է անմահ, լավ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երևն էլ նորան, որ իր գործով
Կապրի անվերջ, անխաղաղ:

Հովհ. Թումանյան

Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդաբանախումբը տարեցտարի հարստացնում, բովանդակալից և հետաքրքիր է դարձնում տվյալ ուսումնական տարում կատարվելիք աշխատանքները: Մեթոդաբանախմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատվությամբ է վերաբերվում իր անելիքին: Մեթոդաբանական առաջին միտումն (օգոստոսին) արդեն կատարվում է աշխատանքի բաժանում: Ըստ նախատեսված ծրագրի և մեթոդաբանական նախագահի՝ Ռիմա Մելքունյանի (ով ունի մանկավարժական երկար տարիների փորձ, պատասխանատվության զգացում, խոր գիտելիքներ, կուլեկտիվի անդամներից յուրաքանչյուրին օգնելու պատրաստականություն և համեստություն) անմիջական նախաձեռնությամբ ու օգնությամբ դպրոցում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, շարադրության, ասմունքի մրցույթներ, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, բաց դասեր և այլն: Ուրախալի է, որ մեր հանրապետությունում ուշադրության ու մեծարանքի են արժանանում Ռ. Մելքունյանի նման նվիրյալ մանկավարժները: 2013 թվականի ապրիլի 10-ին Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի կողմից նա պարգևատրվել է «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի քաղաքային փուլում հաղթող ճանաչվելու համար, իսկ հոկտեմբերի 5-ին ԼՂԿրթության և գիտության նախարարության կողմից՝ «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի հանրապետական փուլի արդյունքներով: «Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություններ գարգացնելու կարողություն» անվանակարգում հաղթող ճանաչվելու համար:

Օրերս Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի 8-րդ դասարանում տեղի ունեցավ հերթական դպրոցական բաց դաս հայ գրականությունից (ուսուցչուհի՝ Անետա Տոնյան): Դասի թեման Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի անմահ պոեմն էր՝ «Թմկաբերդի առուն»:

Դասի նպատակներն էին՝ ակադեմիական, դաստիարակչական և համագործակցային: Ակադեմիական. «Թմկաբերդի առունը»

ԳՐԱԿԱՆ ԵՐԿԻ ՌԻՍՈՒՅՈՒՄ

պոեմի ընկալում և ներկայացում, արտասանելու ունակության զարգացում, բանավոր խոսքի զարգացում:

Դաստիարակչական. հերոսականության, մարդկային առաքինության, մարդու անցողիկ կյանքի արժևորում և վեհ գործերի, անմահության գաղափարի դրվատում:

Համագործակցային. աշակերտների մտքերի հստակ ձևակերպմանը օժանդակում, ունկնդրելու, մտքերի փոխանակման, միմյանց աջակցելու կարողության ձևավորում:

Դասասենյակը կահավորված էր Թումանյանի դիմանկարով, համակարգչով և աշակերտների ձեռքերով պատրաստված պատանուներով: Ուսուցչուհին ստուգեց տնային աշխատանքները: Համաձայնարված էր գրել առած-ասացվածքներ և թևավոր խոսքեր լավ գործի անմահության մասին: Հնչեցին բազմաթիվ հետաքրքիր առած-ասացվածքներ և թևավոր խոսքեր («Աշխատանքը սև է, հացը՝ սպիտակ», «Գործը՝ փառավոր, փառքը՝ թևավոր», «Մի գովիր մարդու տեսքը կամ անթիվ անցավոր գանձերը, այլ գովիր մարդու գործը», «Ծառը պտուղով է զովելի, մարդը՝ տեսքով», «Ամեն մարդու մասին դատում են ըստ նրա գործերի»): Աշակերտները հետաքրքիր և յուրովի մեկնաբանեցին, թե ինչ են հասկանում «լավ մարդ, լավ գործ» ասելով: Ընդհանուր հարցման ժամանակ նրանք ներկայացրին պոեմի հիմքում ընկած այն պատմությունը, որը գրողը լսել է 1901 թվականին, Ախալքալաքում: Պոեմը գրվել է 1902 թվականին: Այն քնարապատմական բնույթի է: Պոեմի սյուժեն ներկայացնելուց հետո աշակերտները բավական շատ տեղեկություններ հաղորդեցին հանրագիտարանից Թմուկ բերդի մասին. «Թմկաբեր, Թմուկ կամ Թմկա բերդ, միջնադարյան հայկական բերդ Մեծ Հայքի Գուգարք աշխարհում՝ Կուր գետի ձախ ափին: Ներկայումս գտնվում է Վրաստանի տարածքում: Բերդը գտնվում է երեք բլուրների վրա և շրջապատված է 150մ երկարությամբ ու 3մ լայնությամբ պատով: Յուրաքանչյուր բլրի վրա կա մի բանի աշտարակ: 12-րդ դարի վերջից, ի թիվս Հյուսիսային Հայաստանի այլ գավառների, Ջավախքն իր Թմուկ (Թմկա) բերդի ու Ախալքալաքի (Նոր քաղաք) հետ տրվել է հայ Ջաքարյանների նախարարական տոհմին՝ որպես ժառանգական կալվածք:

Թմկաբերդի հետ է կապված Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առունը» պոեմը:

Աշակերտները դերերով ներկայացրին այն: Նրանք արտասանում էին արտահայտիչ, գեղեցիկ և մաքուր հայերենով: Ողջունելի էր այն հանգամանքը, որ ուշադրության կենտրոնում էին դասարանի բոլոր աշակերտները: «Դ-ածն աղյուսակ»-ով նրանք բնութագրեցին Թաթուլ իշխանին և Նադիր Շահին, համեմատեցին նախերգանքն ու վերջերգը, կազմեցին «Պրիզմա» կին և գործ բառերով և ընդհանրացրին՝ «Դավաճան կինը պատմվում է»: Ապա ուսուցչուհին աշակերտների ուշադրությունը բևեռեց Թումանյանին նվիրված պատի թերթին, ուր տեղ էին գտել հանձարեղ բանաստեղծի ասույթները և նրա գրական վաստակն արժանապատվաբանաբար խոսքեր: Մեջբերեցք բազմաթիվ մեծ բանաստեղծի ասույթներից մի քանիսը. «Իրեն ճանաչելն ամենամեծ հաղթանակն է», «...մի՞թե գեղեցիկ կնոջից ավելի սրտառուչ երգ կա, կամ առաքինի մարդուց ավելի վսեմ բանաստեղծություն», «Աշխատեցեք ձեր սիրտը պահել մաքուր ու լիքը ամենալավ ու ամենաբարի զգացմունքներով և աշխարհից ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով»:

Միջառարկայական կապեր հաստատվեցին հայոց լեզվի, երաժշտության, պատմության, աշխարհագրության և երկրաչափության հետ: Հայտնի ասմունքող Սուրեն Քոչարյանի կատարմամբ լսեցինք պոեմը: Ասմունքն ուղեկցվում էր տեսաֆիլմով: Լսեցինք պոեմի հիմնական Ալեքսանդր Սպենդիարյանի գրած «Ալմաստ» օպերայից հատված, որը նրա թողած երաժշտական ժառանգության և անցած ստեղծագործական ուղու զարգացման գագաթնակետն է համարվում:

Որպես տնային աշխատանք հանձնարարվեց գրել նշանավոր մարդկանց ասույթներ փառանդության մասին: Վահան Տերյանի բնութագրման ճշմարտացիության մեջ ևս մեկ անգամ համոզվեցինք այս ուսուցողական դասի ընթացքում. «Թումանյանը վարպետ է ամեն կողմով, մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգու իմաստուն ու վսեմ բարգաման»:

Նանար ՍԻՍՈՒՅԱՆ
Սպեթ. հ.6 հիմն. դպրոցի
ՍՀԳԿԿ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԻՐԱԶ ԵՎ ՆԱՅՈՑ ԵՐԵՈՒՆԸ

Մեծանուն բանաստեղծ Գրիգոր Գրիգորյանը այն եզակի ստեղծագործողներից է, ովքեր ժամանակին ընկալելով «անընթաց» պատմություններով խորհրդային կարգերում արգելված ազգային առաջնահերթ որոշ խնդիրներ, չեն վարանել դրանց իսկույն արձագանքել՝ անտեսելով անգամ արգելքները՝ ընդհուպ տնային կյանք: Սիսայանի խնդիրներից էր XX-ի դարասկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված Հայոց մեծ եղեռնի մասին խոսելը, այն համաշխարհային մակարդակով ճանաչելը, մեղավորներին դատապարտելը: Թուրքիայի կողմից հայ ժողովրդի նկատմամբ ոճրագործությունները դարերի պատմություն ունեն, որոնք սրվել են XIX դարում և ահագարհուր կերպարանք ստացել աշխարհի «քաղաքակիրթ» երկրների սանձազերծած առաջին համաշխարհային պատերազմի ժամանակահատվածում՝ այն էլ անգն մարդկանց նկատմամբ:

*Յնորթ չի եղել հայոց վիշտը...
Ես ողբերգում եմ հավերժաբողոք երգով սգասկ,-
Սգա՛, Հայաստան... («Հայոց դանթեականը», էջ 260):
Մի՞թե չպիտի ամեն ապրիլի քսան և չորսին
Մոնչանք հայոց մեծ դատի մասին...
Հայտի, մի՞թե, մինչև Աստուծո՞ւ ողնաշարի մեջ այնպես մռն-
չաս,*

*Որ հատուցումի ճամփեք բանաս,
Հայտի՞ հիշես անթիվ, անհամար հայր ու մայրերիդ մահը
ողջկեզ,*

Մարտիրոսվելը մի անմեղ ազգի... (ն.տ. էջ, 275-276):
Ընդհանրապես, հայ գրականության, մասնավորապես Շիրազի անենաբացահայտ, անենացնող ու ծավալուն գործը Հայոց եղեռնին նվիրված՝ «Հայոց դանթեականն է», որը սկսել է հեղինակի մոտ կերպավորվել 1941-45թթ.: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Երիտասարդ Շիրազը ֆաշիստական Գերմանիայի գործունեությունը բազմակողմանիորեն էր ընկալում և փորձում էր հայերի ճակատագրի ողբերգական օրինակով հնչեցնել դրա դատապարտման անհրաժեշտությունը: Խորհրդային կարգերում Շիրազի այդ պոեմը լույս չտեսավ (տպարանից հետո էր վերադարձվում, որովհետև կոմունիստական գործունեությանը ձեռնադրված քաղաքականություն չէր թուրքիայի դեմ բացահայտ հարց հարուցելը): Ակադեմիկոս Ս. Սարիյանը «Հայոց ցեղասպանությունը XIX դ. հայ գրականության մեջ» հոդվածում նշում է նաև այդ մասին. «Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում ապացույցի ենթակա հարց չէ: Այն միանգամայն հավաստի իրողություն է դարավոր բռնությունների, համաշխարհային պատմական Հայաստանի բնաշխարհից օտարված ազգային զանգվածների, միլիոնավոր զոհվածների անհերքելի վկայությանը: Բայց որպես պատմական եղելություն՝ դա արժանի է խոր ու համակողմանի ուսումնասիրության, և դրա գիտական իմացությունն ուսանելի է ոչ միայն իրական ու դիվանագիտական տեսակետից, այլև քաղաքակրթության, Արևելքի ու Արևմուտքի բախման, կրոնական մաքառումի, մարդաբանության, ցեղային հատկանիշի, ստղիզմի հոգեբանության ճանաչման առումով: Առավել ևս, որ թուրքի ցեղային այդ ծրագիրը շարունակում է գործել նաև այսօր, ավելի կատարելագործված, ավելի ստոր ու ավելի ոճրագործ եղանակներով: Այս իմաստով հայոց ցեղասպանության խնդիրը պետք է քննել ներկա իրադարձությունների դիտակետից, իրերի տրամաբանության մեջ հայտնաբերելու պատմության փորձը» (Ս. Սարիյան, «Հայ գրականության 2 դարը», հ. 4, Ե., 2004, էջ 330):

Գրիգոր Գրիգորյան «Հայոց դանթեական» մեծածավալ պոեմը գրված է կրակված սրտով, աներևակայելի տառապանքով, ուժերի սաստիկ գերլարումով: Տեսլաողբային այս դատաստանամատյանում ահագարհուր դեպքերի նկարագրությունները, Դանթեի, Զոմերի, Խորենացու, Նարեկացու, Կոմիտասի, Անդրանիկի, Գրիգորյան Այվազովսկու և այլոց ոգեխմբի ներկայացման ու նրանց՝ հայկական երբեմնի շեն տեղանքների՝ մոխրակույտի վերածված մասերով առաջնորդելը շիրազյան «անընկալելի հանդգնության», տաղանդի, ամենվիճարկության արարատված արտահայտություններն են, որոնք նկարագրելիս, ցնորվելու են դիմակայելու համար մասիսաչափ ուժ ու կամք էր պետք: Այդ ահավոր դժվարությունները հաղթահարել է մեծ բանաստեղծը՝ մեզ մատուցելով մեր պատմության անլուր տառապանքների մի ժամանակահատված: Մեծատաղանդ Շիրազի «Հայոց դանթեականը» մի քանի տարբերակներով հրատարակվել է արտասահմանում (1965, 1988՝ Բեյրութ, 1969՝ Թեհրան՝ շուրջ 1150 տող ընդհանուր պոեմն այդ ժամանակ 4000 տող էր, իսկ 1980-ին՝ ութ հազար):

1964թ. «Սփիւռք» շաբաթաթերթում այս պոեմից 16 տող տպված էր ու հետո ճշված. «Պոեմը պարունակում է 4000 տող՝ իբրև 4000 Շիրմաքար՝ բազմամիլիոն հայ գոհերու վրա»:

1982թ. Շիրազի երկերի 2-րդ հատորում (Երևան) «Փոքր պոեմներ» շարքում սրանից զետեղվել է 84 տող՝ «Հատվածներ» «Հայոց դանթեականը» պոեմից, և նույն թվականին հեղինակի մասնակցությամբ վերջին անգամ խմբագրվել է պոեմը ու թեմատիկ դիտվածքով (պլան) մախատեսվել լույս ընծայել 1984թ.: Բոլորովին Շիրազը պոեմին կցել է նաև եղեռնը փաստող լուսանկարներ (նաև Սիփան Շիրազի ջանքերով): 1990թ.

վերջապես լույս է տեսել այդ պոեմը՝ նվիրված մեծ բանաստեղծի ու Հայոց եղեռնի 75-ամյակներին (խմբագիր՝ Հարություն Ֆելեքյան, նկարիչ՝ Սիփան Շիրազ):

Պոեմին կցված էր նաև գրականագետ Սուրեն Աղաբաբյանի՝ «Հովի. Շիրազի «Հայոց դանթեականը» հակիրճ խոսքն ու Ֆելեքյանի՝ «Խմբագրի կողմից» որոշ տեղեկություններ:

Դանթե Ալիգերիի «Աստվածային կատակերգությանը» քաջածանոթ հայ մտավորականներն այդ թեմային անդրադարձել են բազմաթիվ անգամ, և ահա XX-ի դարասկզբին բանաստեղծները նորից դանթեականի զուգորդությունների են դիմել՝ պատմելու հայոց արյունոտ ճակատագիրն ու անլուր ողբերգությունը (Սիմանթոյի «Դյուցազնորեն» շարքում՝ հայոց ճակատագիրը համեմատվեց դանթեական ճանապարհի հետ, Զարեհի «Դանթեական առասպելում» ներկայացվեց դժոխքի իրական պատկերի մի պատառիկը, իսկ «Մահվան տեսիլում» Դանթեի անդրշիրիմյան թափառումները գործածվեցին ազգային շարժումների ժողովրդական հավաքական զանգվածների շարջարանաց խառնապատկերները ներկայացնելիս):

«Դանթեական զուգորդությունը չէր կարող ամարծազանք մնալ Երկրորդ համաշխարհային պատերազմի ահեղ թվականներին»՝ ֆաշիստական բարբարոսության «խրախճանքի» տարիներին: Դեռևս այդ ժամանակ էլ տակավին երիտասարդ Գրիգոր Շիրազը, ինչպես վկայում են ժամանակակիցները, գրում է «Հայոց դանթեականը» պոեմի առաջին տարբերակը՝ հայոց չարաղետ ճակատագրի միջոցով հնչեցնելու պատերազմների՝ մարդկության և կյանքի մեծագույն թշնամու դատապարտման թեման» (Ս. Աղաբաբյան, «Հովի. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմին կցված հոդված, էջ 371-74):

«Ես, իմ ազգին սիրելով, ոչ մի ազգի չեմ ատում» կարգախոսով ապրած Շիրազը, որ մարդասիրական օրինակներով շատերի համար ուղեցույց է եղել, ոչ թե վրիժառության, քիմախնդրության է մղում մարդկանց, այլ վատը, սխալը հանդուրժելուն, անմարդկային կամայականություններին դեմ էր, «հիշողության դատապարտում» և արթնացմուն: Հայ ժողովրդին բողոքանքելու Շիրազն իր պոեմն ահեղ «դատաստանամատյան» է համարում, «փետրե գրիչով Աստուծո՞ւ դմներն է թակում»՝ քար աշխարհի դեմ մարդկային տարրական գուրք արթնացնելու համար: 22 զվիցի բաղկացած պոեմի վերջում (նաև «Նախերգանք» ու «Վերջերգանք»), որպես ընդհանրական բողոք ազդարարում է. «Ո՛վ աշխարհ, այս եղեռնը քո խղճի վրա է ծանրացած: Աչքերդ, թեև չոր, բայց հայոց այս մշտապարտույց ցավերի և տառապանքների, խոցերի ու վերքերի վկան են, խլված հողերի և չբաղված դիակներին վկան են... Այն օրերում տեսաք, չլացիք, գեթ այժմ եկեք լալու, գեթ լալու՛, գեթ ողբալու՛ ինձ հետ, գեթ լալու՛, գոնե լացով կիսելու այս անկիսելիներս՝ եղեռնացավերն անբժշկելի... ո՛վ լոխմանիներ...» (էջ 327): Եվ մեր օրերում կրկնվեց իհնը... Սոււնգալիք եղավ «եղբայրական» զինվորների, «աչառու» ոստիկանների հսկողության տակ, ու առայսօր դեռ հատուցումը չի ստացել մեղավոր, թեև շուտով կբոլորի առաջին տասնամյակը: Ցավամորմոք Շիրազը սատիրայի «Ճիպտուն» է մեկնում քաղաքակիրթ մարդկությանը:

*Աշխարհի շքեղ մի բանգարանում
Դեռ մի մամոնտի ժանիք է մնում՝
Ոսկեզօծ ու պերճ
Պահարանի մեջ...
... Ոչ մի գահ-մամոնտ մի ծայն չհանեց,
Երբ չարն իմ ազգին իսպառ կործանեց՝
Չիմված ազգերի այն պիղծ լուռությամբ,
Որ քավեց ինքը՝ Դանթեն սրբությանը...
Օ՛, մի՞թե չարժեք ազգն ապերջանիկ
Այսքան բախտավոր մի չնչին ժանիք,
Որ փայլալույս էր ոսկե տուփի մեջ՝
Թանգարանելով լուկ փոշին այս խեղճ (335):*

Ամբողջ պոեմում քայլ առ քայլ ներկայացվում են եղեռնված ժողովրդի կրած անլուր տանջանքները: Դրանք ահագարհուր պատկերներ են, որ տեսնում են ոգեխմբի աղոթմանը՝ մտավորականներ, որ իրենց ժամանակին զգացել են եղած սխալներն ու ցավերը և իրենց հուզապարունները մեծարժեք յուրատիպությամբ վերարտադրել...:

Շիրազը հիշողության օրենքի տրամաբանությամբ վկայակոչում է այդ մեծությունների մագաղաթած ու համադրում, հակադրում այն դաժան տառապանքներին ու լլկանքներին, որը քաղաքակիրթ մարդկության «սֆինքսաված լուռության», քար անտարբերության առաջ սկսվեց Սուլթան Համիդի ժամանակներից մինչև Աթաթուրք... Բանաստեղծը բազմաթիվ անգամ ասպարեզ է հանում հայ ցեղասպանության անհայտ հրահանգիչներին, նրա անմիջական իրագործողներին՝ դժոխաչար Թալեաթ, Եմվեր, Ջեմալ, Նազըմ եղեռնածիններին... Եղբի արտադրանքներին: Այդ ահեղատեսիլ տեսլաքառում հեղինակը ներկայացնում է զազանաբար հոշոտված հայ մտավորականության մերկայացուցիչների մի շարք (Դանթեի վարածան՝ էջ 236-238, Ռուբեն Սևակ՝ էջ 240-241, Սիմանթո՝ 242-243, Գր. Զոհրապ՝ էջ 243-245...):

*Լուսինն աստղերի խմբով էր լալիս,
Իսկ վարուժանի ոգին մշուշում,*

*Որ աստղի փոխված՝ մեզ հետ էր գալիս՝
Իր մորթված մարմնի կրեժն է հուշում...
... Թե ինչպես եկան և հենց թրքորեն գիշերով տարան
Յոթ հարյուր հայոց մտավորական.
Ջոկ-ջոկ կապեցին ապշալ ծառերին,
Կախեցին ինձ էլ՝ Հիսուսի մման,
Փերթ առ փերթ, ինչպես տերևը ծառեն,
Պոկելով բոլոր մներս կերան... (236):*

Բզկված հայ ժողովրդի հարազատ զավակ Շիրազն ահեղամոռնչ հոգով ու սրտով է պատմեցրել այս դատաստանամատյանը, հոշոտված անթաղ դիակներով դաշտերն ու ծորերը, գանգաբլուրներով լցված և անշեն գյուղերը, մոխրակույտերով, ոսկորներով հեղեղված եկեղեցիները... չնռանալով հայտարարել՝ «Քրիստոնյա աշխարհն է հեթանոսվել, մահմեդվել», բայց.

*Եվ մեծ Բայրոնը ճիչով արտասվեց,
Թվաց՝ մի ոտն ավելի կախվեց...
Սառնասիրտ Գյոթեն ամպեց հառաչով,
Ասես յուր պապերն անցան յուր միջով...
Հայնեն արտասվեց Բայրոնի մման,
Բեղերն էր կրծուն սուրբ Նարեկացին... (287):*

Շիրազը միայն չի ողբերգում, այլ նաև նկարագրում է հայ բազկի ուժը՝ զինված ֆիդայիների քաջագործությունը (303-326)՝ ընդգծելով միաբանության գոյությունն ու բացակայությունը, որը, ցավոք, սակավ էր:

*Այսպես թուրքացած գորքը բեկվեց,
Քանգի հայ զորքն անդրանիկվեց... (էջ 324):*

Որը ցավոք, մի կաթիլ ջուր էր շիկացած անապատում, որը, ցավոք, փշրանքների փրկություն էր... Կործանվեց հայ ժողովրդի կեսից ավելիի հատվածը:

Օրհասական պահեր է նկարագրում Դեր Զորի անապատում: Մայրը զավակին ավագի վրա գրեք է ուսուցանում: Մաշտոցի ոգին, այդ տեսնելով, չի զարմանում... (331): Կամ անենագարմանալին՝ կապտած, ընկած՝ հղի կնոջ արգանդից լույս մանկիկն է դուրս սողում՝ ապրելու տենչով լցված, և ոգեխմբի անդամներն են վերցնում ու լույս աշխարհ տեղափոխում (328-330)՝ խորհրդանշելով հայ ամենուր ոգին. «Մեր մահվան մեջ էլ մեր կյանքն հունդ ունի» (330):

*Ու գնում էինք հայոց փրկության հույսի պաշարով,
Բարուն հետամուտ՝ գալիքատես նոր ճանապարհով,
Ուր հողը էլ թեկուզ երկինք ամբառնա՝
Հայոց է եղել, հայոց կղաճա... (337):*
Եվ այսպես՝ Շիրազի ահեղամոռնչ հոգով ու սրով պատմեցրված այս դատաստանամատյանը «ողբագիր մի դասագիրք» է, ուր հնչեցված է բանաստեղծի ճշմարտախոս բողոքը:

*Ես այս դարի սրտին պիտի
Փորագրեմ, որպես վերքեր,
Որպես հետքերն հայոց վշտի՝
Երեք միլիոն հայ անուններ,
Որպես մեղքերն հողագնդի,
Երեք միլիոն անմեղ զոհեր,
Որ մորթվեցին յաթաղանով
Քար մարդկության աչքի առաջ (334):*

Շիրազի «Հայոց դանթեականը» նաև աչքի է ընկնում պատկերավորության հզոր թափով ու արտահայտչականության կրակով, ուր առաջնային են մարդկությանը, աշխարհի տարբեր ազգություններին դիմելու հրովարտական մենախոսությունները, հատուկ անունների (մեծ մասամբ՝ հայաթափված տեղանունների) խտացված կիրառությունները, հազարագան հայերենի շիրազյան բառակազմական վարպետությունը, հատուկ անուններից կերտված խորիմաստ, տարողունակ ու սեղմ բառերի, հատկապես՝ բայերի կիրառությունները, ինչպես նաև ավանդական համեմատությունները, մակդիրները, ճարտասանական դիմումները և այլ նարեկաշունչ միջոցներ:

Քարե հանրածանոթ մակդիրը եղեռնին նվիրված կառույցում այնքան ցնցող մակարդակների հետ է գործածում (աշխարհառեչակ զարգացած երկրներ. Ռուսաստանն էլ ընդհանրական Հյուսիս է կոչում. այդ պոեմում էլ Ստալինին Կոբա (էջ 60, 217) մականուններից մեկով է արտահայտում, երկի նկատի առնելով կորբան. Ալեքսանդր Կազբեկի Հայրասպանի կերպարի անունն է):

- - - անունով է կոչում), որ ազդեցությունը սահմնվեցուցիչ է ու, սովորական մակդիրների շարքը ճեղքելով, դառնում է ցնցող օրինակ (հենքում՝ տեքստում, նույնիսկ երբեմն գործածված «քար» գոյական մակդիրը տարրալուծվում է այդ ածականի հետ իր փոխաբերական իմաստով, իսկ «մշտաբար» նորաբանությունն առավել ցնցող իմաստով է համադրվում կառույցին՝ կարծես աստիճանավորելով սֆինքսը):

*Աշխարհ սֆինքսը՝ քարե աչքերով անմտասեն,
Քարե շուրթերով, քար ականջներով, քարե հայացքով,
Վիշտս չկիսեց թեկուզ կես կաթիլ քարե արցունքով,
Քարե Աֆրիկան, քարե Եվրոպան, քար Ամերիկան,
Քարե Ֆրանսիան, քարե Իրանը, քարե Իսպանիան,
Քարե Ճապոնը, քար Հինմաչինը, քարե Հյուսիսը,
Քարե խաչապաշտն ու ողջը քարե...*

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՇԻՐԱԶՆ ԵՎ ՆԱՅՈՑ ԵՂԵՈՒՆԸ

7 Շեռալ արնածովն ու սփինքսվելով մի խոսք էլ չասավ,
 Յոթն աշխարհները՝ յոթն էլ մշտաբար, յոթն էլ մշտաբարուն,
 Յոթն էլ մշտաբարուն, ավաղ, մեզ համար յոթն էլ մշտաբարուն,
 Յոթն էլ յոթ սփինքս՝ խորքում կայեցված...
 Ահա թե ինչու յաթաղանը լիոր չի ուզում քավել իր մեղսածովը... (262):
 Մեծատաղանը Շիրազի ահեղամունչ հոգով ու սրտով պատմերգած այս տեսլապոեմը հայ գրականության բարձրարժեք նվաճումներից է ու ցեղասպանությունների դեմ քաղաքակիրթ մարդկության սփինքսաված լուսային ահեղ դատաստանատյանը: Օրինակ՝ ահա խոսուն մակդիրների դիպուկ համարված ընթացքն ու դաժան իրականության ներդաշնակ նկարագրությունը.
 Լուսինն էլ լռին մոլորվեց անճար՝
 Յաթաղանի դեմ դժոխսխեղցար (էջ 299):
 Կամ ահա հայ աղջիկների անվան հոգնակի թվի ընդհանրական գործածությունները, որոնք բազմակողմանիորեն ընդգծում են խոշտանգված, լլկված, անարգված ու անհատակված հայուհիներին՝ հայ լինելու համար՝
 Կույս աղջիկները մեկ-մեկ, բազմությամբ,
 Ոմանք մահաճիչ, ոմանք համր ու հեզ՝
 Գետն էին խուժում, ինչպես գահավեժ աստղերի կայծեր,
 Խեղդվում էին, որ մարմինները պիղծը չպղծեր...
 Քանզի կույսերին և թե հարսներին մեր լալահառաջ
 Խեղդելուց առաջ՝ երկնքի թուրքի լիթր աչքի առաջ,
 Մերկացնելով գիշեր թե ցերեկ, հենց գետի ափում՝
 Ըմբռնվում էին, ապա ձեռքերը մեջքներին կապած՝
 Գետն էին գցում, էլ հայոց գետը ինչպե՞ս չկրծեր,-
 Մեռցվում էին տեղահան արված մայր, մանուկ ու ծեր,
 Արմենուհիներն իմ հազարագեղ ու մարմնանրբին,
 Այծենմիկները՝ քաջ, ինչպես արծիվ, նուրբ, ինչպես լուսինի,
 Գոհարիկներս՝ երկնքից բերված գոհարներ քնքուշ,
 Մարիամիկներս՝ Հիսուսներ ծնող մայրեր փաղաքուշ,
 Աստղիկներն իմ սուրբ՝ լցված արցունքով մեր հայոց բախտի,
 Վարդանուշներս՝ մարմնակուսագեղ վարդեր դրախտի... (217):
 Ինչպես Նշել ենք, Շիրազը Հայոց եղեռնին անդրադարձել էր նաև այլ գործերում: Հաջորդ ամբողջականը «Վանեցու ողբը» հեղինակի կողմից փոքր պոեմ ճանաչված գործն է՝ գրված 1965թ. (ըստ երթման, սա ևս որևէ անտիպ պոեմի մաս է կազմում): Վանակներտրոն Արևմտյան Հայաստանի ահազարհուր պահերից մեկի քնարական նկարագրությունն է առաջին դեմքով և այնքան համոզիչ ու տիպական է, որ թվում է՝ բանաստեղծի կենսագրականից է.
 ...Փախստականի այն գիշեր հայրս փորեց գլխիկոր
 Վանա մեր հին կաղնու տակ գերեզմանի պես մի հոր,
 Ու բերելով ոսկե խաչն ու գանձերը իր բոլոր,
 Կտուվ ձգեց ու հողով ծածկեց հույսերն իր մոլոր:
 Մայր հողին պահ տալով իր սուրբ քրտինքն ու ապավեն խաչը՝ հազարավոր մարդկանց պես գաղթի ճանապարհին է բռնում՝ հոգու խորքում պահելով հայ մարդուն յուրահատուկ միամիտ հավատի ու հույսի նշխար, բայց ցավոք.
 Հայրս չկա... ավա՛ղ, նա մորթվեց գաղթի ճամփեքին...
 ...Աստղե արցունք էր դարձել հսկա խաչը մեր հույսի,
 Ու շաղ եկել աշխարհի խղճի վրա հովազի,
 Մեջն անսահման խավարի, որ դեռ իր սև պատանքով

Փաթաթվել է Մասիսին ու քեզ՝ իմ մայր Վանա ծով:
 Եվ ահա կյանքի դառնությունն ընկած բանաստեղծը, որի հայրը ևս թուրքի յաթաղանի գոհերից է (միայն խորհրդային կարգերի նախաշեմին), ի մի ձուլված իր քնարական հերոսին, արժանուր է իր հայրենի սրբությունները և իր բանաստեղծական բողոքը հղում անգուք աշխարհին.
 Բայց հեռավոր իմ հողի, գերված հողի սրբազան Ամեն մի բուռն ինձ համար մի կուժ ոսկի է անբիծ,
 Եվ աստղալից երկինքը՝ կտորած կուժի չորս բուլոր՝
 Ցրված հայերն են մորթված, հայ սփյուռքն է մեր մոլոր:
 Արդարություն, որտե՞ղ ես, ո՞վ շեյթանը ամենի, Ախ, զոհն քո անհամար աչքերից մեկը հանցի, Որ չտեսար անհամար կտորածներն իմ հայոց...
 Հայոց մեծ եղեռնի թեման ոչ կենտրոնական, այլ մասնակիորեն շոշափող գործեր են՝ «Հայ լեռնապարը», «Ես Մասիս կասեմ», «Կարծում էի՝ ինձ են տվել», «Սպիտակ ծիածկը Փարիզում», «Թե չլինեք զորավարը», «Զգիտեն», «Երբ մորթել են», «Մորս աչքերն են լացել», «Մորը վազող գառի պես», «Հայրն՝ ամրոց, մայրը՝ տաճար», «Հայրս ջաղացպան», «Հորս մահն էր մայրս լալիս», «Մայրս հաճախ ոգուս մեջ», «Հայոց վիշտը», «Հանճարեղ խելագարը» և այլն: Օրինակ, ահա «Հայ լեռնապարը» բանաստեղծությունում, խախտելով ժամանակի և հայոց լեռնագանգվածների աշխարհագրական դիրքերի բնականությունը, բանաստեղծական երևակայությամբ լեզուն է հյուսում՝ ընդգծելով մարդկային վայրագ արարքի ահավորությունը.
 Հայ լեռնապարը իր հայր Մասիսին
 Պարբաշի արել՝ պարուն էր անցավ,
 Երբ լսեց հայոց եղեռնի մասին՝
 Կանգ առավ իսկույն՝ վշտից քարացավ:
 Իսկ թաշկինակը պարբաշու ձեռքից ընկել է վզին,
 Քարացել՝ ծյուն է դառել Մասիսին:
 Ախ, կանգ է առել վշտից լեռնացած հայկական պարը,
 Որ քարացել է հենց պարի պահին,
 Անիծվեն Աստվածն ու քար աշխարհը,
 Որ անպատիժ են թողնում ալլահին:
 Երբեմն մի տողով կամ պատկերային կառույցի շիրազյան վարպետ համարությամբ նյութի մեջ շոշափվում է Հայոց ցեղասպանությունը: Օրինակ, ահա «Ծաղկունքն հողից աչքեր բացին» խոհափիլիսոփայական ու թախտաշարական բանաստեղծության հետևյալ հատվածը.
 ...ինչո՞ւ գերեզմանի
 Ծաղիկներն էլ արցունք ունեն՝
 Չորերի պես մեծ եղեռնի՝
 Որ եփրատներն արցունքներն են,
 Որ հոսում են մինչև այսօր...
 Կամ՝ «Ես ծնվել եմ» կենսագրական բանաստեղծությունում՝
 Ես ծնվել եմ ձորերում,
 Եղեռնի սև օրերում:
 Մայրս կրծքին օրորել է,
 Իմ օրոցքն էլ է կորել...

 Հատուցումը եղեռնի,
 Երբ էլ լինի, կհանի...
 Եղեռնի վերաբերյալ նաև խոհափիլիսոփայական ընդհանրացմամբ քառյակ ունի Հովի. Շիրազը, որը զուգորդելով իր աշխարհի գալու ժամանակահատվածին, սրտամորոնք կսկիծի խտացվածքով մարդ արարածի դժխեմությունն է հուշում.
 Ես ծնվեցի, երբ իմ ցեղն էր սպանվում,
 Ամենագեղն ու շքեղն էր սպանվում,
 Եղեռնվում էր երբ ամենից վսեմն իմ,-
 Երբ ամենից մեծ անմեղն էր սպանվում...
 Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

Ն Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ ԼՂՀ Շահումյանի շրջանի ներքոհիշյալ գյուղերի դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար

- Ալնաբերդի մ/դ - հասարակագիտություն - 6 ժամ.
- Նոր Բրաջուրի մ/դ - զինղեկ - 1 դրույք, դասվար - 22 ժամ, ֆիզիկա - 11 ժամ.
- Նոր Գետաշենի մ/դ - քիմիա, կենսաբանություն - 12 ժամ, պատմություն - 12 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 12 ժամ.
- Դաղիվանքի մ/դ - օտար լեզու (անգլերեն) - 10 ժամ, քիմիա, կենսաբանություն - 13 ժամ, ֆիզկուլտուրա - 12 ժամ.
- Եղեգնուտի մ/դ - ֆիզիկա - 10 ժամ, աշխարհագրություն - 7 ժամ, պատմություն, Հեպ (հայոց եկեղեցու պատմություն) - 11 ժամ.
- Չուարի մ/դ - ռուսաց լեզու - 11 ժամ.
- Նոր Երբեջի մ/դ - զինղեկ - 1 դրույք, աշխարհագրություն - 6 ժամ, ռուսաց լեզու - 3 ժամ, դասվար - 20 ժամ, քիմիա, կենսաբանություն - 14 ժամ. ֆիզկուլտուրա - 15 ժամ.
- Նոր Խարխափուտի հ/դ - դասվար - 20 ժամ, պատմություն - 20 ժամ.
- Ծարի հ/դ - մաթեմատիկա, ֆիզիկա - 7 ժամ, աշխարհագրություն, պատմություն - 8 ժամ, հայոց լեզու - 11 ժամ, քիմիա, կենսաբանություն - 4 ժամ.
- Հավաթաբաղի հ/դ - օտար լեզու(անգլ.) - 8 ժամ, քիմիա, կենսաբ. - 8 ժամ, ռուսաց լեզու - 14 ժամ, զինղեկ 0,5 դրույք, ֆիզկուլտուրա - 9 ժամ.
- Նոր Դարաշինարի մ/դ - զինղեկ - 1 դրույք, ֆիզիկա - 8 ժամ, պատմություն 6 ժամ, աշխարհագրություն - 8 ժամ.
- Նոր Մանաշիղի հ/դ - ֆիզիկա, ինֆորմատիկա - 11 ժամ, աշխարհագրություն - 7 ժամ, պատմություն - 12 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 12 ժամ, ռուսաց լեզու - 16 ժամ.
- Չարեքտարի մ/դ - ֆիզիկա,ինֆորմատիկա - 12 ժամ, աշխարհագրություն - 6 ժամ, դասվար - 22 ժամ, մաթեմատիկա - 19 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 14 ժամ, ֆիզկուլտուրա - 15 ժամ, դասվար - 20 ժամ. Նոր Վերինշենի մ/դ - ինֆորմատիկա - 6 ժամ, օտար լեզու (անգլերեն) - 16 ժամ, դասվար - 20 ժամ:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 25-26 համարում (2013թ.) և տեղադրված են Լեռնային Դարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

- Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),
 2. Փաստաթուղթ (դիմում) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
 3. Անձնագրի պատճենը,
 4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
 6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Դարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
 8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև փետրվարի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթները տեղի կունենան փետրվարի 17-ից 22-ն ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

<p>ԼՈՒՍԱՐԱՐ ԽՍԲԱԳԻՐ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p>	<p>✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info</p>	<p>Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 31.01.2014թ.:</p>
--	--	--	--	--